



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3940

2816

2-22

1869

21

2010

42001

23(04)  
2-27

*am*

2072

# ՁԱՅՆ

## ՍԵՐԱՍՏԱՑԻՈՑ

ԿԱՄ

ՔԱՆԻ ՄԸ ՆԱՄԱԿՆԵՐ

ՈՒՂՂԵԱԼ

ԱՌ ՄԱՆԶՈՒՄԷ ԵՒ ԱՌ ՄԱՍԻՍ

### ՍԵՐԱՍՏԱՑԻՈՑ

ԱՌԱՋՆՈՐԳԱԿԱՆ ԽՆԳՐՈՑ

ՄԱՍԻՆ

281.6  
2-22

2036

# ՍԵՔԱՍՏԱՅԻՈՑ

ԿՍՄ

ՔԱՆԻ ՄԸ ՆԱՄԱԿՆԵՐ

ՈՒՂՆԵԱՆ

ԱՌՄԱՆՉՈՒՄԷ ԵՒ ԱՌՄՈՍԻՍ

## ՍԵԿՍՏԱՅԻՈՑ

ԱՌԱՋՆՈՐԳԱԿԱՆ ԻՆԴԻՈՑ

ՄԱՍԻՆ

644



ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ՔԻՐՐԱԶԵԱՆ

— 1869 —

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
Ս. ՔՐԷՆ. ՎԻՈՒՆԱՏԵԿԵ  
ՀԻՄՆԱԿՆԵՐ  
Պ. Ա. ՄԻՇՈՒՄԵՆԱ  
ՄԱՍԻՆ ԿՈՍՏԱՆԿՆՈՒՊՈԼԻՍ

4653

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՍԵՆՆԵՐԻ ԿՐԹԱՍԵՆՆԵՐԻ ԿՐԹԱՍԵՆՆԵՐԻ

ՄԵԹՈՎԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՍԵՆՆԵՐԻ ԿՐԹԱՍԵՆՆԵՐԻ ԿՐԹԱՍԵՆՆԵՐԻ

ԿՐԹԱՍԵՆՆԵՐԻ ԿՐԹԱՍԵՆՆԵՐԻ ԿՐԹԱՍԵՆՆԵՐԻ

ԿՐԹԱՍԵՆՆԵՐԻ ԿՐԹԱՍԵՆՆԵՐԻ ԿՐԹԱՍԵՆՆԵՐԻ ԿՐԹԱՍԵՆՆԵՐԻ

ԿՐԹԱՍԵՆՆԵՐԻ ԿՐԹԱՍԵՆՆԵՐԻ ԿՐԹԱՍԵՆՆԵՐԻ ԿՐԹԱՍԵՆՆԵՐԻ

ԿՐԹԱՍԵՆՆԵՐԻ ԿՐԹԱՍԵՆՆԵՐԻ ԿՐԹԱՍԵՆՆԵՐԻ ԿՐԹԱՍԵՆՆԵՐԻ

ԿՐԹԱՍԵՆՆԵՐԻ ԿՐԹԱՍԵՆՆԵՐԻ ԿՐԹԱՍԵՆՆԵՐԻ ԿՐԹԱՍԵՆՆԵՐԻ



ՉԱՅՆ

Ս Ե Բ Ա Ս Տ Ա Ց Ի Ո Յ

Սեբաստիա. 8 Մայիս 1869.

Մեծապատիւ աէր.

Սեբաստացիք, յուսով կ'սպասէին որ՝ Ազգային բարեխնամ վարչութիւնը իր ուշադրութիւնը երկու առիթէն հետէ վիճակին տակն ու վրայ ընող անցքերու վրայ դարձնելով, քընտու թեան մը կարեւորութիւնը կ'զգայ, կամ թէ Սեբաստիոյ անկողնասէր մասէն տեղեկութիւններ կ'ուզէ. բայց դժբաղդաբար առնց և ոչ մէկը բլլալով, ընդհակառակը յանակնկալա Ս. Նշմայ վանուց վանահայր և Առաջնորդական փոխանորդարժանապատիւ Պետրոս վարդապետը Պօլիս կը կանչէ և երեմիա եպիսկոպոսը Առաջնորդ կը կարգէ, առանց հաւանութեան և գիտութեան Սեբաստացոյ:

Ինչպէս որ կերեւայ, մէկ երկու անձանց վկայութեամբ Պետրոս վարդապետի վրայ եզած ամբաստանութիւնքը և լրագրաց միջոցաւ հրատարակուած պարտաւանքը բարեխնամ վարչութիւնը սուրբ համարած է, որով մեր բոլորիս սիրտը խոցուած, մենք ալ դիմեցինք մեծապատիւ Մարկոս էֆէնտի Աղաբէկեանի, որ պէտքի խնայի՛ն առ Պատրիարքարանն թէ Պետրոս վարդապետի Պօլիս երթողութիւնը և ժողովուրդը անխնամ կը մնայ. բայց երբ անոր միջնորդութիւնն ալ անխելեղաւ, ստիպուեցանք քաղաքիս վսեմ՝ կուսակալին միջնորդութեամբ խնդրել բարեխնամ վարչութեանէն, որպէս զի եթէ հնար է հիմակու հիմայ Պօլիս չուղէ զՊետրոս վարդապետը, և Ազգիկ Ա թուով ալ հեռագրով ազաչեցինք որ՝ պարտաւանը և մէկ երկու անձանց կրկն համար Սեբաստացիք և վանքը անխնամ թողլով կրկնակի վրդովմանց տեղի չտայ. սակայն

ցաւ է մեզ ըսել, որ մինչեւ հիմայ ազգովին առ բարեխնամ վարչութիւն ճամբած խնդրագրերնուս և ոչ մէկուն պտտասխան մը առնելու բաղդը չունեցանք և միայն այս անգամ վսեմ. կուսակալին հեռագրին պատասխան՝ Տեղապահ Սրբազանէն Նորին վսեմութեան նամակ մը գալը լսեցինք, որով դարձեալ Պետրոս վարդապետը Պօլիս կ'ուղեն ու կիւրիսցի ճանօն ալ Սերաստացւոյ ազգապետ կարգելին կ'իմացունեն. Ասանք տեսնելով համազուեցանք որ՝ Սերաստիոյ ընդհանուր ժողովրդոց ձայնը չլիտի լսուի այլ միայն Պօլսեցի Քրիստոստոսի ազգայի և կիւրիսցի ճանօցի ազգաւէր ձայնը աւելի ազգու և լսելի եղած է վարչութենէն, նա մանաւանդ Տեղապահ Սրբազանէն, որուն համար կը զարմանանք և կը մտածենք թէ 'ի Պօլիս Քրիստոստոսի ազան և 'ի Սերաստիա կիւրիսցի ճանօն վարչութեան առջեւ արդեօք ո՞վ ներկայացուցած է երեսօխտան որ՝ Տեղապահ Սրբազանն ալ Սերաստացւոցմէ առած մահատէր և հեռագրերուն պատասխանը փոխանակ Սերաստացւոց խրկելու, Քրիստոստոսի ազայի խորհրդով կիւրիսցի ճանօցի կը խրկէ, այս առթիւ պարտաւորեցանք մեր լուսթեան քոյր պատուել և դիմել ձեր անկողմնասիրութեան, խնդրելով որ բարեհաճիք ձեր պատուական լրագրոյն միջոցաւ հրատարակել մեր ներկայ նամակը և բարձրացնել մեր ձայնը մինչեւ որ լսելի ըլլայ Տեղապահ Սրբազանէն.

Արդ ինչպէս կ'երեւայ, մինչեւ հիմայ օրագրաց միջոցաւ Սերաստիոյ նկատմամբ հրատարակութիւնքը իրրեւ ճշմարտութիւն կարգացուած է, որոց հեղինակները կոյր մտօք և կոյր խղճիւ այնպէս կ'ուղեն կարծեցնել թէ Սերաստացիք մինչեւ քիչ մը ժամանակ առաջ վայրենի ուսումնատեսայներ էին, զուրկ դպրոցներէ և ուսումնապաշտպան ընկերութիւններէ և Քրիստոստոսի ազան իբր լուսաւորիչ Սերաստիա եկաւ և իր լոյսը սփռելէն վերջ Պօլիս վերագառնալուն իրեն յաջորդ ձրգեց զկիւրիսցի ճանօն, յանձնելով նաեւ անոր Անձնուէր ընկերութեան տեսչութիւնը. այս կերպը ուրիշ բան յառաջ չբերաւ՝ այլ միայն ամեն սիրտ յուզեցան և ամբողջ ժողովուրդը տակն ու վրայ եղաւ ( 'ի շնորհս տեսուչ ճանօցի ). ա-

հա՛ այդ իրենց սահմանը չճանչցող լուսաւորիչներուն աշխատութեանց պտուղը.

Եթէ մինչեւ հիմայ պահած լուսթիւննիս շարունակենք, անշուշտ անձնականուս համար շատ լաւ է, ու իրաւունք չունիմք լուսթիւննիս շարունակելու՝ քանի որ Պօլսեցի Քրիստոստոսի ազայի և կիւրիսցի ճանօցի ձայնը աւելի ազգու է ժողովրդեան մը ձայնէն, որոնք իրենց ձայնին ազգեցութեան վրայ հպարտացած՝ ամեն կերպ յուզմունք և երկպառակութիւն սերմանելու բաղդին արժանացան. սակայն մեր լուսթեամբ ժողովուրդի մը իրաւունքը ստնակոխ ըրած պիտի ըլլանք, քանզի նա իր թշուառութեան որ աստիճանի հասած ըլլալը լաւ կը ճաննէ.

Քրիստոստոսի ազայի առաջին պարծանքը եղող Անձնուէր ընկերութեան Սերաստիոյ ճիւղը եթէ մեր աչքին առջեւ տեսնուածն է, իրեն պատիւ բերելու բան մը չունի և միայն իր կրից դործիք ըլլալը ամեն օր կը տեսնենք. ասոր ապացոյց չէ՞ որ աղքատիկ ուսանողաց դասագիրք արուելու համար ընկերութեան բաժանորդներէն շաբաթական հաւաքուած հընգական փարաները այդ սիրելի նպատակին դործածելու տեղ՝ Անդրանիկի անձնական և անոր պժգալի դատին համար հեռագրի ծախուց կը վատնուի և երբ բաժանորդք և պատուաւոր ժողովականք այդ տարօրինակ վատութիւնը իմացան, դադրեցան բաժանորդութենէ և այսօր Սերաստիոյ Անձնուէր ընկերութեան լակ անունը միայն կայ և իր ամբողջութիւնը կազմակերպ են մէկ քանի անխորձ երիտասարդներ՝ որոնք ամեն բան գործելու պատրաստ են 'ի պատիւ Քրիստոստոսի ազայի և 'ի հաճութիւն կրից կիւրիսցի ճանօցի.

Այդ Քրիստոստոսի ազան չէ՞ որ Սերաստիոյ այդ Անձնուէր ընկերութիւնը իր կամաց և քմաց գործիք ըրած եւ ինչպէս որ վերը յիշեցինք՝ այսօր ընկերութիւնը իր պաշտելի նպատակէն բոլորովին հեռացած՝ ամեն վրդովմունք սերմանելու միջոց մը եղած է 'ի շնորհս տեսուչ ճանօցի, որ 'ի նպատակ Քրիստոստոսի կը գործէ.

Այդ Քրիստոստոսի ազան չէ՞ որ Սերաստիա գտնուած ժա

մանակ Պետրոս վարդապետը այնչափ դաված և շատ անդամ Պոլիս երեւելի անձանց գրած է թէ Պատրիարք ըլլալու արժանի կղեր մը և կղերի մը վայելուչ վարուց և բարուց տէր, նա մանաւանդ իր ատենաբանութեանց մէջ խիտա շատ անգամ խօսած է թէ Սերաստիա երեք անգուղակոն բարերար ունի, որոնց առաջինը և ազգասիրութեան տիպար Պետրոս վարդապետն է, երկրորդ՝ Օտապաշեանք որք իրենց քսակէն շինած են դպրոցը, և երրորդ՝ Պալեօղեան Պետրոս էֆէնտին որ իր ջանքով և աշխատութեամբ դպրոցը ծաղկեցոցած է. Մեր բարեկամ Քրիստոստուր աղան չխաբի՛ր արդեօք որ հիմայ ալ բարեխնամ վարչութեան առջեւ և քննիչի միջոցաւ Պետրոս վարդապետը ամբաստանել և պարստել ելած է. արդեօք ասոնց որք ստոյգ է, դովեանի՛ն թէ տարաւնին. բայց չըջիչեր մեր մտերիմ Քրիստոստուր աղան որ երբեմն իր ծանօթ ներուէն կը գրէր թէ « Քրիստոստուրը սկզբունքի տէր է, մէկ մը աւ կողմ մէկ մը ան կողմ չհա՛ղիր ». հաստատուն սկզբունք:

Այդ Քրիստոստուր աղան չէ՛ր որ հա՛յառակ Սերաստացւոց կամաց կիւրինցի ճանօն Սերաստիոյ ազգայնոց ազգապետ կ'ընէ, շնորհիւ Տեղապահ Սրբազան հօր, և այս ճանօնին համար չէ՞ որ ազգովին բողոք մատուցուեցաւ տեղւոյս կառավարութեան, որպէս զի արդիւն որ երբէք ազգային գործոց միջամտելու չյանդգնի, որոյ օրինակն ալ ձեզ կը ճամբուի ՚ի հրատարակութիւն: Ստիկա այն ճանօն չէ՞, որուն համար Սերաստացիք ամեն ատեն կիւրինցի պատուաւոր անձինքներէ կը նախատուին թէ « ծօ մեր խեղ ճանօն Սերաստացոյ հաճի էմիլեղեր է » և հիմակ ալ ազգապետ շնորհիւ Տեղապահ Սրբազան հօր:

Այդ Քրիստոստուր աղան չէ՞ որ, քան երկու տարեկան երիտասարդ անվարձ Յովհաննէս վարդապետը Սերաստիոյ վարուց վանահայր և առաջնորդական փոխանորդ և երեմիա եպիսկոպոսը Սերաստիոյ վիճակին առաջնորդ կարգել կաշխատի, որ Սերաստացիք երբէք Յովհաննէս վարդապետի վրայ համարում և վատահոմութիւն չունին, և առանց իրենց ընտրութեան ոչ Տեղապահ Սրբազանի և ոչ Քրիստոստուր աղայի բնա-

րած առաջնորդը չեն ընդունիր. արդեօք այս Քրիստոստուր աղան ասկէ մէկ քանի տարի առաջ ազգային Սահմանադրութեան վրայ ունեցած գաղափարը Սերաստիոյ մէջ գործարկել կ'ուզէ որ առանց ազգայնոց հաճութեան առաջնորդ կը խրկէ մեզ իր ուզած ու սիրած երեմիա եպիսկոպոսը. արդեօք չը՞ղիտեր որ « Սերաստիոյ մէջ սուսմունքը ընդհանրացած ըլլալով » հակառակ Սահմանադրութեան որ և է ընտրութեան չէ՛ն հանդուրժեր:

Այդ Քրիստոստուր աղան և ճանօն չէ՛ն որ, անցեալ տարի Մանճըլլիսի առաջնորդ Չաքարիա եպիսկոպոսը օրագրաց միջոցաւ ամբաստանեցին և քննիչ խրկելու առիթ տուին. և երբ յիշեալ եպիսկոպոսը իրենց զիջում բրաւ . . . ներեցին և միջնորդութեամբնին Պատրիարքարանի առջեւ արդարացնելով (որ պահ մը առաջ մեղաւոր է կ'ըսէին) պատուանշանով և իր վիճակին վրայ երկու վիճակ ալ բարդել աւելով իր տեղը դարձուցին:

Այս կիւրինցի ճանօն չէ՞ որ, Քրիստոստուր աղայի Սերաստիա եղած միջոցին բողոքականութիւնը նոր ձգած և տէվրիչութեան ազանդը ընդունած էր և գիշեր ցորեկ չէքէր քաշելու զբաղած էր:

Այս ճանօն չէ՞ սա դժոխային սկզբունքի տէրը որ, միշտ կը պուլայ թէ « թող մեռնի և կորսուի չորս միլիոն հայը բաւական է որ մեզի նման և մեր սկզբունքի տէր չորս հարիւր հայ մնայ ». ի՛նչ վսեմ սկզբունք . . . .

Մեծապատիւ Խմբագիր, ճշմարտիւ կը փափաքէինք որ անգամ մը Պետրոս վարդապետը Պոլիս երթայ, որով Պատրիարքարանը տեսնէ և ճանչէ անոր արժանիքը և շատ մը դաւաւայ առաջնորդներու կարգը զանկից դասած ըլլալուն վրայ զվշայ. սակայն դժբաղդաբար խնդրոյն մէջ այնպիսի դարձուածներ կը տեսնենք որ, առ այժմ անկարելի եղած է ճամբել զնա. վասն զի Քրիստոստուր աղան ամիսներով առաջ Սերաստիա ունեցած խմբիկին բերկրութեամբ սրտի կը ծանուցանէր թէ « անպատճառ, անպատճառ Պետրոսը հոս բերել պիտի տամ ». ասոր համար է որ ժողովուրդն ալ յուլուած




բարձրաձայն կը գոչէ թէ չենք թողուր Պետրոս վարդապետի  
գնալ 'ի Պօլիս . արդեօք Սերաստայւոց կրած հարուածը և  
Քրիստոսաուրի սերմանած երկպառակութիւնքը աւելի յաւա-  
լի չէ՞ Մշեցւոց և Քղեցւոց կրած հարուածներէն , որոնք գոնէ  
լեռնաբնակ քիւրտերէ կ'ընդունին . իսկ մենք դժբաղդարար  
քաղաքացի անձնուէր կոչուած մէկ երկու հայերէ . . . .

Արդ՝ մեծապատիւ տէր , քանի որ մինչեւ հիմայ Սերաս-  
տայիքս առանձինն մեր բողոքոյ ձայնը չկրցանք լսելի ընել  
ազգային բարեխնամ վարչութեան և Տեղապահ Սրբազան Հօր ,  
ստիպուած կը դիմենք ձեր մեծապատուութեան , որպէս զի  
պատուական լրագրոյդ հայրենասէր էջերուն մէջ ներկայս հը-  
րատարակել բարեհաճիք մեր ձայնը բարձրացնելով մինչեւ  
յերկինս , որպէս զի ազգային բարեխնամ վարչութիւնը 'ի  
գութ շարժի և լսէ ժողովուրդի մը հեծեծանքը , զգայ անոր  
թշուառութիւնքը և տեսնայ որ՝ լսկ կրից համար անիրաւ և  
արիւնաթաթախ ճանկերու մէջ անոր իրաւունքը կը բռնաբա-  
րուի և անաչառ քննութեան կարեւորութիւնը զգալով , յատ-  
կապէս քննիչ մը ճամբէ 'ի Սերաստիա . որպէս զի նա ամեն  
բան քննէ , սուտը իրաւէն և յանցաւորը անմեղէն որոչէ : Ուս-  
տի կը բողոքենք և բնաւ չենք կրնար լսել մինչեւ որ բարե-  
խնամ վարչութիւնը քննիչ մը ճամբէ այն պայմանաւ որ յան-  
ցաւոր և անիրաւ մասը քննիչի բոլոր ծախքերը վճարէ :

Մնամք ազգասէր տեսաւնդ բարեացակամ և երախտապարտ  
ի դիմաց թշուառ Սերաստիոյ

Սարգիս Միսաքեան	Մ. Աստուածատուր Գասապպաչեան
Պարսամ Պարսամեան	Յարութիւն Պաշեօզեան
Մանուկ Պօղոսեանց	Յակոբ Էշպապեան
Մ. Պօղոս Մըսրեան	Յակոբ Սարոնեան դափու քեահեասի
Յարութիւն Սէրայտարեան	Մ. Գարրիէլ Պէղիրճեան
Յարութիւն Մուսնեան	Մանուկ Ղասարճեան
Խաչատուր Թանտրըճեան	Մտեփան տէր Գարրիէլեան
Նազարէթ Փօթուխեան	Գարրիէլ Փամկոչեան
Մ. Յովհաննէս Պէրպէրեան	Երեսօթեան Մ. Յակոբ Ղըրըզեան



Մեծապատիւ խմբագիր .

Ձեր 13<sup>րդ</sup> թիւ ազգօգուտ թերթին մէջ « Սերաստիոյ խմբ-  
ագիր » մականուամբ յօդուած մը կարդացինք , որոյ պատաս-  
խանն արդէն 'առ պատրիարքական վարչութիւնն ուղղելէ և  
անոր խոհուն և արդարադատ դատողութեանը յանձնելէն  
յետոյ ալ չեմք ուզեր ձեր գրուածոց մի առ մի պատասխանել ,  
գիտնալով որ դուք ալ չպիտի բարեհաճիք համոզուելու . ուս-  
տի պատիւ ունիմք սա միայն իմացնելու , որ Պետրոս վարդա-  
պետը ոչ կեղծ ու պատիր պատճառներով հոս մնալ մտքէն ան-  
ցուցած է , ոչ կեղծ ազգասիրութիւն է իրեն վահան ընտրա-  
ծը , ոչ մէկ քանի բաղդախնդիր անձանց կոթնած խառն ժո-  
ղովոյ որոշման դէմ կը զինի , ոչ անոր մօրուքին կը խնդայ , ոչ  
հանրագրին մէջ մատ կամ թելադրութիւն ունի . և այս ամե-  
նուն ծանօթ ճշմարտութենէն կը հետեւցնեմք թէ յանդգնու-  
թիւն ալ գործած չէ . այս , եթէ վարչութիւնն ալ ասանկ հա-  
մոզուած ըլլար , չպիտի կրնար հանդուրժել Պետրոս վարդա-  
պետի ուշանալուն նկատմամբ , բայց նա քաջ իմացած է իր  
չըլահայեցութեամբը , որ լաւ պիտի ընէ եթէ նախ իրեն ուղ-  
ղուած գրութեանց ուշադրութիւն ընէ , որոնք յայտնի կը  
ցուցնեն որ՝ ոչ թէ Սերաստիան վարչութեան որոշման՝ այլ  
ինքզինք բարերար Սերաստիոյ ճանչունել ուզող Քրիստոս-  
տուր Ղազարոսեան աղայի որոշման հակառակը գործել կու-  
ղէ , քաջ տեղեկացած ըլլալով որ ոչ թէ վարչութեանն է այս  
որոշումը այլ նոյն ինքն Քրիստոստուր Ղազարոսեան աղայի ,  
որ բարեխնամ վարչութենէն երկու ամիս առաջ յիշեալ որո-  
շումն ըրած և երեմիա եպիսկոպոսը առաջնորդ կարգած ըմն-  
ցուցած էր իր մտքին մէջ ու իր Սերաստիոյ բարեկամացն ալ  
ուրախութեամբ սրտի հաղորդած էր այս լուրը : Այս այսպէս  
ըլլալով , Սերաստիան չէր ուզեր և չէր կրնար իր ամբողջու-  
թեան իրաւացի կամբը մէկ մարդու մը հաճոյից զոհ եղած տես-  
նել . մեղի անանկ կերեւայ որ Քրիստոստուր Ղազարոսեան ա-  
ղայն կեղծ ու պատիր պատճառներով կուղէ զայլացնել զրա-

րեխնամ վարչութիւնը, սակայն ՚ի զուր պիտի աշխատի. մենք  
 ցաւօք կրտսեմք, մեր փափաքած ողին չեմք գտներ անոր քով  
 ինչպէս որ ցարդ յուսացած էինք, անշուշտ օր մ'ալ վարչու-  
 թիւնը և մեր ՚ի Պօլիս գտնուող մէկ քանի հայրենակիցք պի-  
 տի հասկնան. թող ճգնի Քրիստոստուր աղան Մարկոս էֆէն-  
 տիկ պատիւն արատաւորելու, թող ուղածին չափ սպառնայ Պ.  
 Պ. ի և Պ. Յ. ի իրենց գրութիւնները ՚ի հրատարակ հանելու,  
 նոքա ալ անամբեր կապասեն ատոր. . . բայց յարմար առ-  
 թի կապասէ եղեր յիշեալ մեծապատիւ աղան որ սա ալ իրա-  
 ւունք է, սակայն ասկէ յարմարագոյն առիթ կրնայ ըլլալ իր  
 նպատակին հասնելու. Զարմանալի բան է փոխանակ Պ. Պ. Պ.  
 Յ. Ս. և ուրիշ շատ մը նշանագրերու, որոնք չգիտցողներու հա-  
 մար նշանակութիւն մը չունին, աղէկ չէր ըլլար Պետրոս Պալ-  
 եօղեան և Պ. Յակոբ Ահարոնեան գրել որ աշխարհ իմանար  
 թէ ասոնք լրագրաց միջոցաւ շատ անգամ « ազգասէր » ըսած  
 և դոված անձինքներն են, որք այսօր կարհամարհուին. Մեծ.  
 Մարկոս էֆէնտի ազգասէր և պատուարժան անձին ամբողջ քա-  
 ղաքի մը ընելիք բարերարութեան, ըստ իւր կարծեաց, « աջա-  
 կից » գանուելուն համար. արդեօք պիտի չ'խպնի՞ Քրիստոստուր  
 աղան Մեծ. Մարկոս էֆէնտիէն և ազգին ողջամիտ մասէն, ու-  
 բոնք յայտնի կը տեսնեն բոլոր այս բաներուն սոսկ զըպարտու-  
 թիւն ըլլալը. Մարկոս էֆէնտին ազգայնոց խնդրանօք և նոյն  
 ինքն Քրիստոստուր աղայի «գրած» ճամբած գրին վստահացեալ  
 հեռագիր զարկած է ՚ի Պատրիարքարան, քանզի ազգը իր յու-  
 սահատ վիճակին մէջ այնպիսի անկողմնասէր անձի մը օգնու-  
 թեանը կը կարօտէր. ազգը կը տեսնէր որ վեց ամսէ հետէ  
 անդոյ քաղաքական ժողով մը կ'ըրինցի ճանոցի հրաւիրանօք  
 յարութիւն կառնու և ժողով կը կազմէ, և միայն երեք չորս  
 անգամով ազգին կամացը հակառակ Յովհաննէս վարդապետը  
 փոխ. առաջնորդ կը կարգէ, առանց ազգին կամքը բարեխը-  
 նամ վարչութեան իմացնել ուզելու, ինչպէս որ իր պարտքն  
 էր ընել պատասխանելով պատրիարքական հեռագրին, այս  
 չըրաւ, և երբ ազգին խնդրանօք Մեծ. Մարկոս էֆէնտին  
 բարեհաճեցաւ միջամտելու, անոր ազդեցութիւնը կտորելու

եղաւ քառամեկի միջոցներով. կուղէինք գիտնալ թէ արդեօք  
 այս քաղաքական ժողովը Քրիստոստուր աղան ճանչցուց Տ-  
 Սրբազանին գիտնալով որ ճանօն և այսինչը անգամ ըլլալով շու-  
 տով իրեն կամքը յառաջ պիտի տանէին. արդեօք ըսած չէր  
 Քրիստոստուր աղան որ վեց ամսէ ՚ի վեր Սերաստիան քաղա-  
 քական ժողով չունէր. այս երեւակայեալ ժողովին մի անդամնե-  
 բուն ստիպում եղած է հանրագիրն ստորագրելու, եթէ յիշեալ  
 հանրագիրը տեսած չէ, թող բարեհաճի երթալ տեսնելու թէ  
 իր ճանչցած քաղաքական ժողովոյ մեծագոյն մասին ստորագ-  
 րութիւնը հոն կայ թէ ոչ, և թէ այս անձինքը ստիպմամբ ստո-  
 բագրութիւն դնող անձինքներն են. թող երթայ կրտսեմք տեսնայ  
 թէ իր ճանչցած և կոնդակաւ վաւերացուած Աստումնական խոր-  
 հրրդոյ անդամներն են հոն ստորագրողները, բայց ՚ի վարդան  
 Որդարեանէ և Յակոբ վարժապետէ, որոնք եթէ իր հաճոցից  
 դործիք չեն հասցա ինչ են. Աստումնական խորհուրդը, կը-  
 սէ, բոլորքած է այս բռնաբարութեանց դէմ, զարմանալի  
 բան. արդեօք մի ուսումնական խորհուրդն է այս բոլորքողը  
 և որոնք են իր մեծագոյն մաս կոչածը, խորհրդոյ կնիքը մէկ  
 անձի մը քով ըլլալով առանց անդամաց հաւանութեան զար-  
 կած է եղեր, կրտսէ. ատոր ՚ի պատասխան զինքը վերտոին կը  
 հրաւիրեմք երթալ հանրագիրը տեսնելու, սա միայն կը հարցը-  
 նեմք որ մինչև ցարդ չէր գիտեր արդեօք խորհրդոյ կնիքը մէկ  
 անձի մը քով գտնուիլը. . . ուրեմն Քրիստոստուր աղայ քեզ  
 հման ազգասէր ճանչցուած անձի մը վայելուչ դարձուածքներ  
 կրնան ըսուիլ ասոնք. արդեօք այս բաները կրնես, որպէսզի  
 վարչութեան և ազգին առջին դուն քեզ յառաջադիմութեան  
 բարեկամաց պաշտպան ցուցնելով շարունակեմ դեռ քու դերդ-  
 ալ չսպառեմ քողդ, չյայտնեմ մինչև ցարդ մեզի անձանօթ  
 նպատակդ, որ կ'ըլլես ամեն ատեն, ողջամիտ, ազգասէր, ու-  
 սումնասէր կոչած անձանցդ դէմ ալ մաքառել կուզես, ինչ,  
 միթէ քեզի դործիք ըլլալ ուզողը միայն ազգասէր կը ճանչ-  
 նաս, չե՞ս յիշեր որ քու արհամարհած անձինքդ շատ տարի-  
 ներէ ՚ի վեր քեզ ճանչնալու բազդը ունենալէն շատ յառաջ  
 ազգին յառաջադիմութեան համար անդուլ կաշխատէին ու

կոչխատին, իսկ Անձնուէր ընկերութեան քաղաքական գործերու չկրնար խառնուելու մասին իբրև Անձնուէր ժողովոյ անդամք կը պատասխանեմք թէ երկու տարիէ ՚ի վեր քանի՞ անգամ յիշեալ բարենպաստակ ընկերութեան յառաջադիմութեան վրայ խորհուած է. չէ՞ որ մեծաւ մասամբ քաղաքական խնդիրներով կղբաղի, թէև այս տեսակ խնդիրները չարձանագրուին ալ, արդեօք ֆրիստոստուր աղային փափաքն ու դիտաւորութիւնն ալ նոյնը չէ՞ որ երկու տարիէ ՚ի վեր Անձնուէր ընկերութեան խոստացուած կանոնադիրը խրկել չուզեր, որովհետև գիտէ որ այն ատեն չպիտի կրնայ իր գործիքները իրենց նպատակէն դուրս գործի խառնուիլ և հետեւաբար ինքն ալ չպիտի կրնայ յաջողել իր գործոց մէջ:

Արդ Մեծ. Տ. խմբագիր, ձեր վաղեմի բարեկամութիւնը և անկողմնասէր ոգին կը ներէ մեզ աղաչելու զձեր Մեծապատուութիւնը որ բարեհաճիք հիւրընկալել մեր ալ ներկայ նամակը ձեր պատուական էջերուն մէջ, որով անտարակոյս ոչ միայն մեզ, այլ բոլոր Սերաստաբնակ թշուառ աղգայնոց ալ մեծ շնորհ մը ըրած պիտի ըլլաք, որք ստուգիւ կարօտ են աղգասիրաց հեռատեսութեան և անհամբեր սգւով անաչառ քննութեան մը կսպասեն, որպէսզի իրենց նախկին խաղաղութիւնը գտնալով, հոգերնին իրենց դպրոցաց յառաջադիմութեանը վրայ դարձունեն

Ընդունեցէք Տէր, մեր մեծարանաց հաւատարիքը, որով մնամք բարեացապարտ Աղգասիրիդ

Ի գիմաց Ուսումնական խորհրդոյ

Ատենադպիր  
Սամուէլ Մ. Արծրունի

Փ. Ատենապետ  
Ստեփան Տ. Գաւիթեան



Մեծապատիւ և ազգասէր Տէր խմբագիր.

Նախընթաց մայիսի 26 թուով Ամեն. Տ. Սրբազան Հօր կողմէ « Մեծապատիւ Ատենապետ Աղգային Քաղաքական Ժողովոյ և Արժանապատիւ Տ. Յովհաննէս վարդապետ Սերաստիոյ » հասցէով ուղղեալ նամակին պատճէնը և մեր ներկայ պատասխանը ձերդ աղգասէր խմբագրութեան կը մատուցանեմք պատուական լրագրոյդ մէջ հրատարակելու խնդրանօք:

Պարճէն Ս. Տեղապահ Հօր նամակն:

Մեծապատիւ ատենապետ Աղգ. Քաղաքական Ժողովոյ, և Արժանապատիւ Տ. Յովհաննէս վարդապետ Սերաստիոյ.

Քաղաքական Ժողովոյդ անդամներէն Մեծ. Ճանօ էֆէնտի տեղական աղգային գործոց նկատմամբ ինչ ինչ գրաւոր յանձնարարութիւններ ըրած ըլլալով մինչդեռ Ճանօ էֆէնտին զանոնք գործագրած և այս առթիւ մեր գոհունակութիւնը գրաւած է, միւս կողմէ մեզի հասած գրութիւններէն կիւմանամք որ՝ խումբ մը խումկայոյդ անձինք, որոնց մէջ ցաւալի է ըսել թէ քահանաներ իսկ կը գտնուին, չեմք դիտեր ի՞նչ թաղուն նպատակաւ և ինչ ոգւով դրդուած ամբաստանադիր մը կը պատրաստեն եղեր Բարձրապատիւ կուսակալին մատուցանելու թէ Ճանօ էֆէնտին աղգային գործոց կը միջամբոտէ, և թէ արգելուի պաշտօնապէս այս միջամտութիւնը:

Այս տեսակ ամբաստանութիւն մը նշանակութիւն չունի, այնպիսի խնդիր մը հիմնովին ապօրինաւոր է:

Ամեն մարդ իրաւունք ունի աղգային գործոց վրայ խօսելու, իսկ գործելու իրաւունք անոնք միայն ունին որոնք որ պաշտօնի կարգեալ են. Ճանօ էֆէնտին աղգային քաղաքական Ժողովոյ անդամ ընտրուած է, և իբր այն՝ պաշտօնական յանձնարարութիւններ մեզմէ կընդունի երբեմնակի և կը գործադրէ:

Չեմ կրնար ըմբռնել թէ ասոր մէջ ի՞նչ իրաւունք և ի՞նչ

առ իմ կայ ճանօ էֆէնաին լուսահաստեալու նոյն իսկ Բարձր  
բարձրապետի կուսակալին առ ջեւ :

Այս բողոքանայ ձեւն իսկ ապօրինաւոր է . ժողովրդային  
ընտրութիւնք , ազգային իրաւունքները և կեդրոնական վարչ  
չութեան արժանապատուութիւնը նուաստելու փորձ մ'է :

Այս տեսակ փորձերը անպատիժ չեն թողուիր . և անոնք  
որ աղայօրէն կը կարծեն թէ օտար միջոցներէ օգուտ կրնան  
քաղել , կը սխալին մեծապէս , քանի որ նոյն իսկ արգարտ  
գորով Տէրութիւնը վրէժխնդիր է անկարգութեանց և յուզում  
ներու հեղինակ եղող անձանց դէմ :

Իսկ գալով այդպիսի ամբաստանագիր մը ստորագրող քա  
հանայից , ասոնց յանցանքը աւելի կը ծանրանայ իրենց եկեղե  
յական գրից մէջ , ուր կը պարտաւորին խաղաղութեան և եղ  
բայրակցութեան պաշտօնեաներ ըլլալ , իրենց ժողովրդեան  
զարգացման վրայ հսկել , ազգային իշխանութիւնը յարդել .  
մինչդեռ այս վիճակիս մէջ իրենց կոչումին հակապատկերը կը  
ներկայացնեն , ըմբոստ և պառակտիչ ընթացք մը ձեռք առ  
նելով : Այս ամեն պարագաներու վրայ ձեր խորին ուշագրու  
թիւնը հրաւիրելով ձեզ կը յանձնեմ որ նոյն քահանայից յա  
տուկ ազգարարութիւն մը ընէք 'ի կանոնադատութիւն հրա  
ւիրելով զիրենք , և յիշեցնելով այն մեծ պատասխանատու  
թիւնը , որու ենթակայ եղած են :

Այս ինքրոյն նկատմամբ յատուկ նամակ մ'ալ Բարձր . կու  
սակալին գրեցինք , զոր ներփակեալ կ'ստանաք և կը մատու  
ցանէք Նորին բարձրութեան ու ձեր գործողութեանց ար  
գիւնքը 'ի վերջոյ կը տեղեկագրէք մեզ :

Հաւաստի ըլլալով որ քաղաքական ժողովրդ խաղաղութիւնը  
անվրդով պահելու , և իր պաշտօնը անխերի կատարելու ջա  
նադիր կը գանուի :

Մնամ աղօթարար

Պ. ՏԵՂԱՊԱՀ ԱՐԻՍՏԱԿԵՍ

(Կէէ)

ԵՊԻՍԿՈՊՈՍ

26 Մայիս 1869

'ի Պատրիարքարանի Հայոց Կ. Պօլիս :

Ըստ մեզ տակաւին Սմեն . Տ . Ս . Հայրը կամ քաղաքիս ժո  
ղովներուն վրայով 'իլրոյ տեղեկութիւն ստացած ըլլալու չէ և  
կամ այնպէս ձեւանալ կուզէ որ 'իր խրկած ազգարարագրոյն  
հասցէն « Առ . . . Սեբաստիոյ » կը գրէ , քանզի մենք թէ Սե  
բաստիոյ բնակիչն եմք չեմք տեսներ այդ անուամբ ժողովի մը  
գոյութիւնը և միայն անունը իրմէ կը լսեմք « որուն ան  
գամներէն , կըսէ , Մեծ . ճանօ էֆէնաին տեղական ազգային  
գործոց նկատմամբ ինչ ինչ գրաւոր յանձնարարութիւններ ը  
րած ըլլալով ճանօ էֆէնաին զանոնք գործադրած և այս առ  
թիւ մեր գոհունակութիւնը գրաւած է . . . » չեմք կրնար յիշել  
թէ ինչ է արդեօք այդ « յանձնարարութիւններ » ըսածը որոնք  
ճանօն « գործադրած » և Սմեն . Տ . Ս . Հօր գոհունակութիւնը  
ստացած է , արդեօք ճանօյի երկար ժամանակէ 'ի վեր գործադ  
րած յանձնարարութիւնները քաղաքիս մէջ սերմանած զբժ  
տութիւն և յուզմանքներն են որոնք Սմեն . Տ . Ս . Հօր գո  
հունակութեան արժանի եղած են , և թէ ճանօն չէր որ  
քաղաքիս մէջ ծագած պառակտութեանց պարագլուխ կեցած  
ըլլալուն համար երբեմն իրեն քուէ առող հաստրակութեան  
սիրտը վիրաւորելով 'ի միակ' դարման խաղաղութեան բաղմա  
թիւ ստորագրութեամբ հանրագրով մը խնդրեց տեղական ար  
գարագորով կառավարութենէն որ 'ի յիշեալ ճանօյի ազգային  
գործոց միջամտութիւնը 'ի պաշտօնէ արգելուի , ինչպէս որ  
նոյն ինքն « վրէժխնդիր է յուզումներու հեղինակ եղող անձանց  
դէմ » :

Ինչո՞ւ ցաւեղեր է այս Սմեն . Տ . Ս . Հօր արդեօք սուտ  
էր Սեբաստացին՝ ճանօն պառակտութեանց և յուզմանց պա  
րագլուխ և հեղինակ ճանչնալու մասին . ցաւօք սրտի կըսեմք  
որ ցարդ ո՛չ միայն Նորին սրբազնութիւնը չուզեց լսել Սեբաս  
տիոյ ձայնին այլ նոցա օրինաւոր խնդիրները « նշանակութիւն  
չունեցան » իր քով և « ապօրինաւոր » եղան , այն նկատմամբ է  
որ կը յարէ Նորին բարձր սրբազնութիւնը թէ « խուճաբ մը խը  
ռովայոյզ անձինք որոնց մէջ ցաւալի է ըսել թէ քահանաներ  
իսկ կը գտնուին . չեմք գիտեր ինչ թագուն նպատակաւ և ինչ  
սղակով գրգռուած՝ ամբաստանագիր մը կը պատրաստեն և

զեր . . . » չեմք գիտեր թէ Ամեն . Տ . Ս . Հօր խառնայոյց կօշած անձինքը ո՞րք են . ամբողջ Սերաստացիքը՝ ուր միտ թեամբ այդ ամբաստանագիր ըսածը ստորագրած են և չեն ուզեր բնանայնպիսի անձի մը Այդ այլին գործոց միջամտութիւնը քանի որ փորձով ամեն չարեաց հեղինակ զայն ճանչեր է . բայց եթէ Ամենագրատիւ Տ . Ս . Հայրը առանց ճանօն անձամբ տեսած ըլլալու անոր վրայ լուհամարում ստացեր և սիրեր է , շատ շքնորհակալ պիտի ըլլայ Սերաստացին՝ երբ իր քով կանչէ և անոր տղգային գործեր յանձնէ , ուր ինքն ալ կարելի է կարօտ եղած ըլլայ այնպիսի անձի մը . Սերաստացին ալ ան ատեն օր մը պիտի ունենայ յիշատակաց արժանի . Ճիշդ այսպէս պատասխանեցինք տեղոյս Վ. Ամեն . կուտակալին երբ Նորին Սրբազնութիւնը ճանօցի մասին յատուկ նամակ մ'ալ Նորին վսեմութեան խրկած էր , ինչպէս որ նամակին մէջ ալ յիշած է .

« Թագուն նպատակաւ և ինչ ոգւով գրգռուած » խօսքին դալով այս խնդրոյն մէջ ամենեւին « Թագուն » գործ մը չկայ . քանզի գործ մը որ ինքնին պարզուած և գործ մը որ ինքնին ճանօցի արժանիքը կըսած է և ասպարէզ ելած . ուրեմն ըստ մեզ անվայել է Ամեն . Տ . Ս . Հօր՝ այսպիսի անձի մը անունը իր պատրիարքական կնիքին տակ յիշատակել և պաշտպանողական ձեւով վրէժխնդիր կենալ .

« Ժողովրդային ընտրութիւնը ազգային իրաւունքները կեդրոնական վարչութեան արժանապատուութիւնը նուաստելու փորձ մ'է » կըսէ , եթէ ժողովուրդը ընտրելու իրաւունքը ունի . նոյնպէս հրաժարել տալու . ըսել կուզենք՝ եթէ երբեմն ճանօն ազգային ժողովոյ անդամ ընտրուած էր և եթէ այդ ժողովոյն գոյութիւնը մինչեւ այսօր պահուած լինէր ( որ ութ ամիս է չկայ ) դարձեալ ժողովուրդը կրնար և իրաւունք ունէր ճանօնի ընթացից նկատմամբ զայն իր պաշտօնէն դադրեցնել , ուր կը մնայ որ այսօր սոսկ ազգային անհատ մը՝ որ ունակութիւն ըրեր է ամեն կերպ յուզում և գժտութիւն ամեն օր սերմանելու և ազգայնոց խողաղութիւնը վրդովելու , ինչ ընելու էր այս անձին դէմ , եթէ ոչ կառավարութեան միջոցաւ անոր ընթացից արգելք դնել . ահա Սերաստացին ալ այս ըրաւ , իսկ

կեղ ըննական վարչութեան արժանապատուութիւնը նուաստելու փորձ ըսածին դալով՝ բողոքովին անտեղի խօսք մըն է . քանզի ճանօն վարչութեան հետ ինչ կապակցութիւն և յարաբերութիւն ունի և վարչութիւնն ալ զայն որ և է կերպով պաշտօնի մը չէր կարգած . այս խօսքէն ուրիշ բան չըհետեւիր եթէ ոչ իր վրէժխնդրութեան մասնակից ընել զվարչութիւնն . բայց եթէ չըցաւ իր Ամեն . Տ . Ս . Հայրը պիտի ստիպուինք ըսել թէ իր այս գործերուն շատերէն վարչութիւնը բնաւ տեղեկութիւն չունի և եթէ վարչութիւնը դիտար չենք յուսար որ այս նամակին դրուելուն անդամ հաճութիւն տար :

Այս կերպը ուրիշ բան յառաջ չբերեր , այլ իր ուզածն ու ազգին չուզած մարդը մեծ ճանչցունել է , ամեն մարդ ու մեծութիւնը ու պատիւը իր գործէն կախում ունի , Ամեն . Տ . Ս . Հօր այս ըրածը բռնութիւն է ժողովրդային կարծեաց դէմ և հետեւապէս ազգային իրաւունքները ըստ մեզ ոտից կոխան ընել է , վասնզի կը յաւելու թէ « այս տեսակ գործերը անպատիժ չեն թողուիր , և անոնք որ տղայօրէն կը կարծեն թէ օտար միջոցներէ օգուտ կրնան քաղել կը սխալին մեծապէս » ահա հոս է ուր կը հանդէի Ամեն . Տ . Ս . Հօր բուն միտքը և խնդրոյն գլխաւոր վախճանը , և ասով է որ կ'ահաբեկէ Ամեն . Տ . Սրբազաննիս Սերաստիոց անդօր և խեղճ ռամկութիւնը՝ սա մտօք թէ կը պատժուին անոնք ըստ վրէժխնդրական օրինաց արդարաւորով Տէրութեան , որք ճանօ ազայի պատիւը կը վատահամբաւեն և թէ՛ կամ ճանօ կամ Սերաստիա երկուքը մէկ նշանակութիւն ունին իր քով , և դեռ օտար միջոցներու դիմելն ալ կերպով մը կը մեղադրէ և կերպով մը կապաւնայ :

Մնամք բարեացապարտ Մեծապատիւ Ազգասիրիդ

Խաչատուր Թանարձեան ,  
Մ. Աստուածատուր Բառապարտեան ,  
Սարգիս Միսաքեան ,  
Յարութիւն Պալեօզեան ,  
Պարսամ Պարսամեան :

3196  
1004  
30499



20 Յունիս 1869 ՚ի Սեբաստիա .

Մեծապատիւ Տէր Աղատասէր , Մանգումէի էֆէքեար պատուական և ազգօգուտ լրագրոյն .

Հաճեցէք ձեր հայրենանուէր խմբագրութեան ընդարձակ էջերուն մէջ հիւրընկալութեան խորշիկ մը շնորհել յետագայ յօդուածոյս ՚ի սէր ճշմարտութեան , որուն անկողմնակալ պաշտպան հանդիսացած էք ձեր խմբագրութեան սկզբնաւորութենէն հետէ :

Չկայ ընկերութիւն մը՝ որ անօգուտ ըլլայ , որ և է ընկերութիւն գոնէ իր անդամոց համար առանձին օգուտ մը կարգասաւորէ . այս օգուտն է ահա որ կը դրդէ զմարդ ընկերութիւն , այլ այս օգուտն այնչափ մեծ է և արդար , որչափ է իր նպատակին մեծութիւնն ու սրբութիւնն : Ընկերութեան մը օգուտն իր նպատակին հետ ուղիղ և անմեկին յարաբերութիւն մը ունի . այնպէս որ ընկերութեան մը որ և է անդամ որչափ իր նպատակէն կը շեղի , նոյն համեմատութեամբ իր ձեռք բերելիք օգուտէն ալ շեղած կ'ըլլայ , և իր այս անպատեհ գործքը ոչ միայն իւր ազգին , այլեւ որ և է եղանակաւ իրեն հետ վերաբերութիւն ունեցող անձանց ալ ՚ի ֆրաս կը կրթի : Ընկերութիւնը բարոյական մարմին մ'է , ամեն կենսաւոր մարմին իր կենաց համար կ'ընէ՝ ինչ որ կ'ընէ , քանզի իր ուտելը , խըմելը , քայլելը , նստելը , ննջելը և այլ որ և է շարժմունքն իր այս անգուդական բարւոյն պահպանութեանը կ'ուղղէ . և ասանկով թէ իր անձին և թէ իրեն հետ վերաբերութիւն ունեցող անձանց օգտակար կ'ըլլայ , եթէ խելքով կամ Աստուծոյ իրեն տուած բնազդմամբ վարուի . այսպէս կ'ըլլայ նաեւ ընկերութիւն մը՝ երբ միայն իր նպատակին ուշ կը դնէ : Իսկ եթէ իր ազդեցութիւնը ընդարձակելու համար իր նպատակին չորս գին շրջան մը ընէ , կը նմանի ճշդիւ կողմնացուցին մագնիսացեալ սլաքին , որուն ընդ երկար սնավաստակ պարայածութիւնը նաւուղուութեան և աշխարհագրութեան մեծ օգուտներ կ'ընծայէ իր մաշելովը . և որովհետեւ ընկերութիւնը իր շրջանին

մէջ այն մագնիսացեալ սլաքին պէս ազատ չէ , այլ բաղմամբիւ բանաւոր հակակիր խոչ և խուժերէ շրջապատուած է , ուստի հարկ կ'ըլլայ իրեն զանոնք ոտքի տակ կոխել և կոխուիլ և իրար բաղխելով ջաղխել և ջաղխիլ և ֆրասն այնչափ ընդհանուր և ֆրասակար կ'ըլլայ , որչափ մեծ պիտի ըլլար նոյն ընկերութեան օգուտը երբ իր նպատակէն չշեղէր : Եւ ո՞ր ընկերութիւնն անձնանուիրութեան չափ ամենասուրբ նպատակի մը վիճակուած և ազգիս ընդհանրութեան կենցաղօգուտ կրնայ ըլլայ : Վաճառականութեան և Առեւտրական ընկերութիւնք կը հարստացնեն այս՝ զմարդ , այլ նոյն հարստութիւնը յաղահովի պահելու եղանակը սովորեցնելն ուրիշ ընկերութեան մը կիցնայ , այն է Ուսումնական և Երևուական խորհրդոց : Ուսումնական խորհրդոց խնամքն անժխտելի է այս՝ բայց մասնաւոր գպրոցի մը վրայ միայն կը տարածի . ըստ որում ազգս սիրելի և թշուառ ազգս իր այս ցաւալի թմբութեան մէջ խելքի և զգայնութեան անհրաժեշտ պէտք մը ունի նախապէս : Ասիկայ ճշմարտութիւն մ'է , ամեն մարդ գիտէր զայս , բայց ոչ ոք ասոր յաջողագոյն միջոց մը երկնած էր , մինչեւ որ ազգիս մահահանգոյն թմբութեանը գէժ ազգութեանս միութեան կապը միացնելու համար , ուսումն ու գաստիարակութիւնը ազգիս ընդհանրութեան մէջ ծաւալելու փրկաւիթ և Աստուածազդեցիկ խորհուրդը թելագրեցաւ քանի մը ոսկի արծաններու արժանաւոր անձանց սրտերուն մէջ : Այս եղաւ Անձնուէր ընկերութեան նպատակը , խնկելի և պաշտելի է , որոց անձնուէր խումբին մէջ գոնէ փայտահար մը ըլլալուն բազդն երկու տարիէ ՚ի վեր ես ալ կը վայելեմ , գասախօսութեան պաշտօնով և եթէ , հակառակ ինձի գէժ պարտուած անիրաւ և անտաժանելի նախատանաց : Երբուի համարձակութեանս եթէ յանդգնիմ ըսելու , թէ առաւել եմ քան զ՝անձնանուէր ոք իմ պաշտօնիս մէջ , որուն Մեծ . Ֆրիստոսաւոր ազան ալ կրնայ վկայել : Վերը ըսինք որ ընկերութեան մը օգուտը ուղիղ և անմեկին յարաբերութիւն մը ունի իր նպատակին հետ : Արդ ինչ հանրական սուրբ և պաշտելի նպատակ կրնայ ըլլալ՝ քան զ՝անձնանուէր ընկերութեանն , ինչ յաջող մեթոս մը կրնայ բրու

նուիլ քան զՍնորը . բայց աւանդ . մարդոց սրտին չտրու թիւնը նոյն Աստուածային անհամեմատ պարզեւն ալ կրցաւ դէժ հայրենեացս մէջ իր կյոյր կրից գործիքն ընելու , սրբապիղծ յանդգնութեանը ձեռներէց ըլլալ քանի մը կեդրոնախոյս մարմնոց ձեռօք , մարմիններ կը կոչեմ զանոնք լոկ մարմիններ , քան զի անոնցմէ ոմանք երկու տարիէ 'ի վեր կամաւ և դիտու թեամբ , ազգութեանս բարոյական շէնքին հաստատութիւնը , Անձնանուէր ընկերութեան նպատակին դէմ ընդ դէմ հակառակ եղանակաւ մը վերին վայր յեղյեղեցին , սրով և իրենց բանական հոգւոյն իսկ գոյութիւնն ուրացան՝ անոր մէկ հատիկ նշանը սէրն և ընկերսիրութիւնը իսպառ եղծելով , և ոմանք յանդէտս կամ յակամայս գործիք մը ըլլալով՝ անոնց դժոխսային նպատակը յառաջ տանելու միայն ծառայեցին հակառակ իրենց հոգւոյն ազգման . սրով և վերը ըսածնուս պէս այնչափ վնասակար եղաւ աստուածահաճոց ընկերութիւնս գժբազդ հայրենակցացս իր նպատակէն շեղելով , որչափ որ մեծ պիտ'ըլլային անտարակոյս իր հանրական օգուաները թէ հայրենեացս և թէ շրջակայ բազմահայ դաւառաց և քաղաքաց , զոր աւանդ , երկամեայ ցաւալի փորձով մը իմացանք : Քանզի ասանկով Անձնուէր ընկերութիւնը փոխանակ հայրենակից ամեն հասակի և վիճակի ժողովրդոցս անսահման սիրոյն և վստահութեանը , զոր կշտապինդ կը վայելէր , նախատանաց նետերու նշաւակ եղաւ , և պարսաւանաց տերբուկներու տակ ծածկուեցաւ այն նոյն ժողովրդէն որ այնչափ 'ի սրտէ կը սիրէր զայն : Միայն այս չէ . ուսմունքը որ երկու տարի առաջ հոգացես աստուածապէս կը պաշտուէր բոլոր հայրենեացս մէջ , հիմա սատանայի չափ ատելի և նզովից առարկոյ եղաւ : Ո՛հ , ահա հայրենեացս վիճակը այս գժբազդութեան հասաւ , քանի մը անձինք ինքնուրոյն կարծիքներու անիրաւ շատագով մը կանգնելով . բացառեանք այս քանի մը անձինքը , և մանաւանդ անոնց հոստեղի պարագլուխն և ղեկավարը . բայց չեմք ուղեր յանուանէ հրապարակագոյժ ընել անոր այս չքնաղ բարեմասնութիւնքը , ըստ որում տեղոյս արդի Անձնանուիրութիւն կարծեցեալ մեքենայութեան ան-

ւոյն առանցքն ու կեդրոնն նոյն ինքն ըլլալով՝ ընկերութեանս ամեն անհատք իրեն պաշտպանութեան կը դիմեն . բնականաբար 'ի կեդրոն դիմող հիւլէներու պէս : Հերիք կը համարիմք այժմ այս հարցումներն անոր ուղղել , հաստատուն գուշակելով այս անփութելի հեռեւանքը , թէ մեր առ սէր մարդասիրութեան և չափաւորութեան ծածկել ուղած այս անունը ինքնին պիտի յայտնուի , կամ նոյն իսկ այս ամբաստանութեանս ենթակայող անձէն և կամ իր շատագովներէն : Իսկ եթէ մեր այս գրուածը անպատասխանի մնայ , յայտնապէս պիտի ցուցուի որ կամ իրենք բոլորովին անիրաւ ու ապաբան են , և կամ թէ ես յանիրաւի իրենց վրայ կը յարձակիմ , իմ խօսքերս անպատասխանի թողու ընին ոչ եթէ արհամարհոտ և վեհանձն ըլլաու թիւն մը , այլ արհամարհելի և սրտցաւութեան արժանի անտարբերութիւն մը պէտք է համարուի իրաւամբ : Արդ կը հարցնեմ , ո՞վ էր որ իր տեսչութեան առջի օրերը պնդեց և ինը քուէի դէմ իրեք քուէով սրոշեց և արձանագրել տուաւ որ ընկերութեանս եռամեայ հաշուեցուցակին մէջ ելից ու մըտից և առձեռն պատրաստ գոյից և զբամոց գումարներն և եթ գրուին , մինչ նաեւ Քրիստոստուր ազան անգամ որոշած էր , որ ամեն բան յականէ յանուանէ տեղն 'ի տեղը զատ զատ գրուի : Ո՞վ էր որ հանրագրի մը ընկերութեանս անունովը ապօրինաւոր եղանակաւ վաւերացուելու տրամագրութեան դէմ բողբաժ ատենս ըսաւ « եթէ ինձ համակարծիք չես , կրնաս հրաժարիլ , ըստ սրում բոլոր ընկերութիւնս այս բանն այսպէս ըլլալ կ'ուզէ » և բոլոր ընկերութեան հաւանութիւնը առաւ և արձանագրեց ալ բաց 'ի ինձմէ և եղբորմէս առանց նոյն հանրագիրը ընկերութեան առջին կարգացուցած ըլլալու : Ո՞վ էր էր որ շարունակ կը գոչէր , Անձնուէր ընկերութիւնը , իր դէմ ելնողը կը կոխկռտէ , թէեւ հաստատուն գիտէր որ մեր հայրենեաց չափ անձնուիրութեան վրայ մեծ և կատարեալ դազաբար ունեցող հասարակութիւն մը չկար կոստանդնուպօլսէն զատ : Ո՞վ էր , որուն և իր գործակցաց շնորհիւ , Ազգս վից զօրաւոր և իրարու դէմ ընդդէմ կուսակցութիւններու բաժնաւեցաւ , որք են , Առաջնորդական , Պետրոսեան , Յովհանն-

նէսեան, Ուսումնական, Անձնանուէր և Սենեքերիմեան, Ո՞վ էր այն, որ իր արբանեակներուն ձեռք (որոնք մեծ-պահքը շնորհաւորելու կեղծեօք տեղւոյս Սրժ. Փօխ-առաջնորդ Պետրոս Ս. Հօր եկած էին) Մամուլ լրագրոյն Քաղաքիս առաջնորդական խնդրոյն նկատմամբ տեղեկութիւն պարունակող թիւն առաւ, և չեմ գիտեր ի՞նչ եղանակաւ ձեռքէ ձեռք տարածելով Հայրենեացս մէջ մեծ գրգռութիւն մը հանեց. և այն գրգռութեան պատճառը Սրժ. Փօխ. Ս. Հօր վերադրեց: Ո՞վ էր, վերջապէս կը հարցնեմ անհնարին ցաւօք, որսվհետեւ դժբաղդ հայրենեացս այս վերջին աղէան ալ նկարագրելու դժբաղդութեանը կը պատրաստուիմ. ո՞վ էր որ առաւօտ մը իր անկողնոյն մէջ հեծեծելով իր բարեկամաց և Սենեքերիմեան ընկերութեան մէկ քանի պատուարժան անդամոց « անդբար, ճշմարիտ կրսեմ արդար արիւն կը մատնուի կոր, օգնութիւն մը ՚ի սէր Աստուծոյ օգնութիւն մը պէտք է վնասենք, եթէ Աստուած մը կայ կրսենք, Սրժ. Պետրոս Ս. Հօր համար » և այս անձինքը մէկ երկու օր ետքը իր խնդիրը կատարած ըլլալով, զայրացաւ անոնց դէմ, և ամեն վատ միջոցներուն դիմեց, անոնց պատիւն արատաւորելու համար, և ոմանք ալ Անձնանուէր ընկերութեան անդամակցութենէն հրաժարեցուց. որպէս թէ Անձնանուէր ընկերութեան անդամակիցք նարդի վահանակներ են, զորոնք ուղածին պէս պէտք է շարժէ կամ ղետեղէ, և դպրոցիս Հայկաբանութիան երկրորդ դասատու վարդան վարժապետն ալ իրեն գործիք ըրաւ, հակառակ կամաց ընդհանուր հայրենակից հասարակութեանս և մանաւանդ Սենեքերիմեան ընկերութեան, որոնք զանիկայ հրաժարեցուցած ըլլալով ինքը տարաւ և այնպիսի ազդեցութեանց պաշտպանութեանն յանձնեց զայն, որոնցմէ ազգս երկպառակելու բաւական ուժ և հաստատուն կամք կը յուսար, իր իրաւախոհ, չըսեմ խորամանկ թելադրութեանց միջոցաւ. ըրաւ զայս մշտնջենաւորապէս յաջողելու մը յուսով. և յիշեալ վարժապետը տեղւոյս Ս. Սարգսի թաղին դպրոցը դասատու կարգել տուաւ և դպրոցիս միւս դասատուքն ալ, բաց ՚ի նուաստէս, հրապուրեց և հոն տարաւ, որոնք դպրոցիս աշակերտաց մէկ


քանին ալ իրենց ետեւէն քաշեցին, տարին և դեռեւս տանելու համար ամեն ջանք ՚ի գործ կը դնեն:

Այլ աւանդ, չեմք գիտեր թէ հայրենակից ազգայնոցս յառաջագիմութեան խանձարուրքն եղող ութեւտասանմեայ ազգային հաստատութիւն մը ի՞նչ վախճան պիտի ունենայ, կամ թէ Սենեքերիմեան համբաւատենչ ընկերութեան արիւնախաուն քրտանց արդիւնքն եղող և յառաջգիմութեան նուիրուած կէս միլիոնէն աւելի դումար մը յուճկէտս վասնուած պիտի չհամարուի՞ արդեօք. քանզի դպրոցիս նկատմամբ մինչեւ հիմա յառաջ բերուածները անցեալն ու ներկայն միայն են, որոնք ապագային մէջ կատարուելիք ազգակործան գործոց նախաշաւիղ պատրաստութիւնքը հազիւ կրնան համարուիլ, ինչպէս ձեր խոհականութեանն ալ յայննի է: Ահա ասոնք եղան տեղւոյս Անձնանուէր կարծեցեալ ընկերութեան օգուտներն և անոնց գործունեաց և նախանձախնդիր ղգլխաւոր անդամոց փառաւոր պատուանունները, զորոնք ազգութեանս սրտին արիւնովը կուզեն դրոշմել տալ անջնջելի կերպով իրենց ճակտին վրայ: Տեղւոյս Անձնանուէր ընկերութիւնը մանաւանդ իր ներկայ վիճակին մէջ կանոնագրութեան մը էական կարօտութիւնն ունի, քանզի ինքն հիմա աւելի Հիւսկէն և Սփինքսեան մարդախողխող դաղափարի մը կը ծառայէ: Ընկերութեան այս կարօտութիւնը թէպէտ երկու տարի առաջ լեցուած կը համարէինք, ընկերութեանս անդամակցաց և Ուսումնական խորհրդէն քանի մը բանիբուն անձանց ընտրութեամբ տասնեւհինգ կանոններ խմբագրուած ըլլալով, բայց երբ նոյն կանոնն անգործադրելի համարուեցաւ, և Անձ. ընկերութեան կեդրոնէն նոր հրահանգի մը խրկուիլը խոստացուեցաւ, Անձ. ընկերութեան տեսչի մը պարտքը չէր արդեօք նոյնն ստէպ պահանջել, և ո՞վ իրաւունք չունի կարծելու թէ այս կամաւոր զանցառութիւնը անոր համար ըրած է, գուցէ նորին ազգասիրութեան քաղաքագէտ ճարտարութիւնն՝ որ իր խորհրդոց և գործոց սահման չգրուի: Ո՞վ իրաւունք չունի կարծել թէ, այնպիսի բարեկարգիչներէ կընդունի իր հրահանգը, որոց մէկուն առաջարկուեցաւ երբեմն թէ « տէր, մար-



դուն գլուխը յստակ ջուրի մէջ կը տեսնուի » և առաջարկողն հետեւեալ պատասխանն ընդունեց « բայց ձուկն ալ պղտոր ջուրի մէջ կորսացուի » : Մեծ . Տէր , ասոնք ամենքն ալ ոչ եթէ երեւակայութեան և կրից խաբեպատիր խողական էակներ են , այլ երկրաչափապէս ապացուցուած ճշմարտութիւններ : Տակաւին շատ մը այսպէս ապացուցեալ ըսելիքներ ալ ունէի , բայց զրպարտիչ չեղեանալու համար դէմ առ այժմ կը լռեմ և ասոր համար ալ տեղ տեղ բացատրութիւնքս երկրացելի ընել որոշած եմ , որպէսզի ազգիս անաչառ և իրաւասէր հետաքրքրութիւնը ասոնց վրայ հրաւիրելով՝ առիթ ունենամ տեղեցող անաչառատես քննադատութեամբն ալ հաստատել թէ ըսածներս և թէ ըսելիքներս : Եւ որովհետեւ դիտեմ թէ այս խօսքերս այնպիսի անձի մը կը գրեմ , որուն առջին ճրջմարտութիւնը ոչ եթէ թուանշաններու պէս է , որոյ արժէքը տասնեակ դրութեանց մէջ իրենց բռնած տեղէն կախումն ունի , այլ ազամանդ մ' է , որ միշտ երկրի խորքէն ի լոյս կելնէ : Ուստի կազաչեմ , ի սէր Աստուծոյ և Ազգիս , բարեհաճիք հրատարակել զասոնք , որպէսզի եթէ զրպարտիչ եմ ամսթապարտ և անպատասխանի մնամ հայրենակից ազգայնոցս առջին . իսկ եթէ պահանջուած ատեն խօսածներս կէտ առ կէտ ապացուցանեմ , ճանչնան անմահ յիշատակաց արժանի հիմնադիրք Աստուածահաճոյ Անձ . ընկերութեան , թէ իրենց ամենասուրբ անունը և նպատակը ինչ ազգակործան մեքենայութեանց գործիքներ կըլլան , որով հոս տեղի ընկերութիւնս ազգաւէր և անձնասէր անուան աւելի կարժանաւորի , քան թէ անձնանուէր : Արդ ի սէր ճշմարտութեան և ի պաշտպանութիւն բարոյապէս անդամ անդամ կոտորուած հայրենակից ազգայնոցս մեր նուաստ լնդրոյն զիջանելնուդ բոլորովին վստահ ըլլալով ,

Մնամ մեծ . Տեառնդ ազգասիրի խոնարհ ծառայ  
Թադէոս Մ. Պ. Կէղիւրեան  
Դասատու Հայկաբանութեան Թարգմ.  
Մայր վարժարանի Սեբաստիոյ :



1869 Օդոսսոս 7 'ի Սեբաստիա .

Մեծ ազատիւ և ազգասէր Տէր .

Երեմիա եպիսկոպոսը վերջապէս եկաւ հասաւ 'ի Սեբաստիա , բայց տեսնենք թէ ինչեր եղան ըլլալիքներէն զատ . ահաւասիկ անոր գալուստէն 'ի վեր տեղի տուած դժտութեանց պատմական ծրագիրը . Բայց նախ փունջի աւետարերութեան և աչք 'ի լոյսի դալ շնորհանք . որովհետեւ անոր Սեբաստիոյ նկատմամբ ունեցած միակ բաղձանքներէն մէկն ալ այս էր . Այն առաջին ժամուն յորում Սրբազանը Ս. Նշանի վանքը կիջնայ , այն կողմերը ժուռ եկող մէկ երկու քաղաքացուցմէ ճանաչուելով և խակոյն լուրը քաղաք տարածուելով՝ յեկեղեցին դումարուած հասարակութեան կողմանէ քանի մը պատուաւոր անձինք և քահանայք առ օրին կուգան իրեն կ'իմացունեն ժողովրդեան թէական ընդունելութիւնը իրեն իբրեւ հիւր կամ քննիչ եկած ըլլալու մասին , նոյնպէս և բնաւին չընդունելութիւնը իբրեւ առաջնորդ եկած ըլլալու մասին , և կը յաւելուն թէ մեք արդէն առաջնորդ ունինք ուրիշ ով գայ չենք ընդունիր . . . Սրբազանն ալ պատգամաւորաց իրեն իբրեւ խաղաղութեան հրեշտակ և հիւր մը եկած ըլլալը խմայունելով զանոնք միամիտ արձակելէն յետոյ շարաթ երեկոյին Քրիստոսի Ա. լակերպութեան նախատօնակին ատեն յեկեղեցուջ գիտաբար յառաջնորդական գահը բազմելով առջի խոստման հակառակը ժողովրդեան նորանոր խուսկութեանց տեղի կուտայ զոր և իրեն կ'զգացունեն : Ինքն ալ կիւրակէ առաւօտ մեծաւ բարկութեամբ և իշխանական սաստիւ երկու՝ այսինքն առաջնորդական և փոխառաջնորդական աթոռները վերցունել տալով լոկ 'ի լոկոյ կը կանգնի տեղը . յետոյ քարոզ տալով իր ներքին կամքը կը յայտնէ ու գլխաւոր խօսքերովը թէ « օրհնեալ ժողովուրդք , ձեր խաղաղութիւնը և միաբանութիւնը անձկանօք կը լնդրեմ , և ձեզի համար պատրաստ եմ ես ամեն խաչ աւարդանք նախատինք մահու և արեամբ չափ յանձն առնուլ » , այս խօսքը 'ի սկզբան անդ լաւ մտօք ըսած կը կարծուէր , բայց արդ իրեն ընթացիցը նայելով՝ ապագով գիտմամբ ըսած կը

կարծուի. ըստ որում ինքը բերանացի ալ քանի մը անձանց քով մնալու չափ ժողովրդեան կամացը հակառակ շարժելու դիտու մը հասկացուցած կըլլայ, ինչ և իցէ, Քարոզէն վերջը Ս. ա. քերցի ժամանակ կերէնէ կերթայ, ժողովուրդն անհամբեր կըս պատէ կարապետ եպիսկոպոսին առաջնորդ յիշատակուելուն. իսկ Ներսէս անուն վարդապետ պատարագիչը դիտմամբ ընդդէմը դործելուն համար քիչ կը մնայ որ ժողովուրդը զինքը սեղանէն վար պիտոր իջեցունէ եղեր, եթէ Յովհաննէս վարդապետը անոնց համոզիլը յորդորներ չկարդար: Նոյն օրը Պետրոս վարդապետն ալ անձնակախ տկարութեամբ ժամ եկած չէր: Քանի մը օր յետոյ նորէն հասարակութիւնը Մայր եկեղեցին խռնելով բազմութիւ անձինք կ'ընտրեն ու կը խրկեն վանքը դեպիսկոպոսը անկէց հանելու ճամբելու համար. որոց եպիսկոպոսը՝ « ես Պատրիարքարանի շատ մը ստիպողական թելերուն հրամանաւը խաբուած ու հոս եկած եմ, կարապետ եպիսկոպոսի 20—30 հազիւ չուղղներէ զատ ամբողջ հասարակութիւնը ուղղ ըլլալուն իրականութեանը հակադարձը լրած ըլլալու համար » պատասխանելէն յետոյ զանոնք կարձակէ սս միամտեցուցիչ խօսքն ալ յարելով թէ « արդ քանի որ դործն այսպէս է, կարապետ եպիսկոպոսը ուղղները թող նորոգ հանրագիր մը ընեն, յայնժամ կը պարտաւորիմ կը խոստանամ որ ես ալ զանի ստորագրելով քանի մը օր ալ ձեզ հիւրանալէս յետոյ անպատճառ ճամբայ ելնեմ դէպ 'ի Պօլիս, և Պատրիարքարան դայած ժամանակս զանի վարչութեան ցուցանելով ձեր կամացը համաձայն դործել պիտոր տամ. . . ես ալ իմ կողմանէ ընելիքս դիտեմ » այս տեղ կը թողունք խել մ'ալ Պօլսոյ վարչութեան ապօրինաւորութեան նախատինքներ տեղալը:

Ժողովուրդը այս խօսքերուն վրայ քանի մը օր ալ կը հանդարտի: Եպիսկոպոսը հեռզհեռէ զինքը մէկ քանի ուղղներէն քաջալերուած միտքը կը փոխէ կըսէ թէ « ես այսչափ ծախքը բաժ եմ մինչեւ հոս և դատ ունիմ վարելիք այս տեղաց քայլ մը անդին չեմ երթար » . և այս դիտմամբ ալ տնանկ աղքատի մը հանդանակութեան համար իբրեւ Ս. առաջնորդ յիւրանուն ստորագրեալ և կնքեալ հրամանագիր մը կուտայ: Զայս լսելով

Ժողովուրդը նորէն կը բորբոքին և բողոքաբար վալի վաշային խնայ կուտան. և մինչդեռ ընդհանրութեամբ կուզեն երթալ վանքէն հանել, վալի վաշայն իմանալով զանոնք կը հանդարտեցունէ, խոստանալով որ ինք իր կողմանէ քանի մը պատուաւոր անձինք խրկելով զանի վանքէն հանէ, զոր և կատարեց որով ժողովուրդն ալ հանդարտեցաւ: Բայց նոյն օրը կարապետ անուն անձ մը, այնքան բազմութեան մէջ մտնելով իբր թէ կարապետ եպիսկոպոսի մօրուքին կարգին և զանի ուղղներուն կանանցը հայհոյելուն համար ժողովրդեան ցատումէն շարաշար կը պատուհասակոծուի որով և վալի վաշայէն ալ զազգ անպատուող դատուելով բանտ կը ձգուի: Հետեւեալ օրը Սրբազանը Սարը հասանցի վարդան վարժապետի առաջնորդութեամբ վալի վաշային ներկայանալով անկից պատուէր կընդունի 'ի խաղաղութիւն սերաստաբնակ ազգայնոց վանքը չերթալ այլ ուրիշ որ և է ուղած տեղը կենալ: Բայց դուրս ելածին պէս ընդունած պատուէրին հակառակ վերստին նոյն Սարը հասանցի պարոն վարդանին կարապետութեամբ դէպ 'ի վանք կուղեւորի, որով հոն դիզուած խուռն բազմութեան զայրոյթը շարժելով վանք երթալէ կ'արդիւրի անդրէն: Իսկ յիշեալ Սարը հասանցին որ երկու տարիէ հետէ քաղաքիս խռովութեանցը պատճառներէն մէկն եղած ըլլալով ինքզինքը ատելի ըրած է հասարակութեան, նոյն կէտին ալ այնքան ամբոխին կամացը հակառակելու և դիմադրելու յանդուզն երազոյն հետեւելուն համար գրեթէ բռնի ձեռ կուտէ ժողովրդէն՝ ձեռելու ձեռքնհաս պարմանիքը եպիսկոպոսին վալի վաշային դիմել բողոքելը տեսնելով իսկոյն անյայտ կըլլան. եպիսկոպոսն ալ խել մը տակաւին այն տեղուանքը դործուի ինք դեգերող ԶՅ հոգւոյ չափ անձինք բանտարկել կուտայ, և քինահանութեան համար ցայսօր չազատեր զանոնք, ըստ որում քանի քանիցս թէ բանտարկեալք և թէ անոնց ընտանիքը իրեն մերթ աղաչանքներ և մերթ բողոքներ բարձին, բայց ամենեւին մտիկ չըրաւ: Նոյն օրերը իբրեւ խռովայոյց Թաշճեան Բասքալ ըսուած անձն ալ բանտ ձգուած ըլլալով, անոր բարեկամ Մկրտիչ Տէր Ղազարեան պատանին քովը տեսութեան կուգայ, որուն վերայի-

չեալ բանտարկեալք կըսեն թէ դու կարգացող ուսումնական մը ես, 'ի մեր գիմաց ազատութեան գիր մը դրէ եպիսկոպոսին նա ալ նոյն բասկալին հետ խորհրդակցելով և անկէջ թեւադ բուած՝ աղերսող ըլն մէջ ծածուկէն անոնց ըսածէն աւելի խարդախ խօսք ալ խառնելով թէ «Սրբադան հայր, եթէ զմեզ ազատես, մեք ալ զքեզ կուզենք և զմեզ խուժայող ասելու թեան դրդուող պարագլուխները քեզ կիմացունենք» և անոնց ստորագրութիւններն ալ առնելով կը տանի եպիսկոպոսին կուտայ, սրն որ թուղթը պահելով դարձեալ չաղատեր զանոնք, բայց այս թղթոյն վրայ հետեւեալ օրը յիշեալ Բասքալը իսկոյն կաղատուի բանտէն. զարմանք չէ այս, սոյն Բասքալը յետոյ քանի մը անգամ բանտարկելոց կը խրատէ թէ երեք երեւելի այս ինչ անուն իշխանները իբրեւ ազդախուով խոստովանեցէք, որ աղատուիք, ապա թէ ոչ շատ պիտոր մնաք այս տեղ, ևն» անոնք ալ այդպէս վատութիւն մը յանձն չառնելով կը մերժեն զինքը: Յետոյ բանտարկելոց ընտանիքը քանիցս վալի փաշային աղերս և բողոք բառնալով, վերջապէս վալի փաշայն ալ զեպիսկոպոսը բանտարկելոց քննութեանը կը հրաւիրէ ներկայանալ, իսկ նա անձնական տկարութիւն պատճառելով չերթար, հուսկ յետոյ երթալ ստիպուելով բանտարկելոցմէ ոմանց անմեղութեանը որով և ազատութեանը արժանազատ և ստորասող կը հանդիսանայ: Քանի մը օր յետոյ մնացելոց ալ քննութեան ատեն վերստին եպիսկոպոսը կը բողոքէ թէ ասոնք այս ինչ եղանակաւ թուղթ մը տուած են ինձ, կամ ըստ այնմ զիրենք դրդուողները թող յայտնեն և կամ չէ նէ պիտոր նորէն բանտարկուին: Մնոնք ալ զայս լսելով աղերսող ըլն մէջ մուտ արուած խարդախութեանը վրայ զարմանալով կըսեն թէ երբէք մեք այդպէս բան մը դրել տուած չենք և այն խարդախ գրչին հետ դատ ունինք, բայց եպիսկոպոսը մտիկ չընելով նորէն զանոնք բանտարկել կառաջարկէ. վալի փաշայն ալ թէեւ քիչ չզարմանար եպիսկոպոսին այնպիսի թղթի մը առ օրին իրեն չտալ և ուշացունելուն վրայ, բայց և այնպէս զոչ նկատողութեամբ անոր կամաց համաձայն զանոնք վերստին բանտարկել կուտայ առջի աղատեալներն ալ միասին. ուր 'ի զուր կը մնան ցայսօր:

յիշեալ զըշխարհախ Սարը հասանցի Տէր Ղաղարոսեան Մըկըրտիչն ալ արդէն բողոքուած ըլլալուն համար նա ալ կը բողոքուի և կը բանտարկուի:

Չարմանալի անոխակալ ազգասիրութիւն ունի եզեր երեւմիա եպիսկոպոսը, որ յիշեալ անպարսներուն յետին ծայր յուսահատութեան մէջ ընկնել, առուատուրէն զրկուիլ, տուները նին երեսի վրայ մնալ, և մինչև կրօնավիտութեան դիմելու ստիպուելին, արանջալ, աղաչել, բողոքելն և միւս կողմէն ալ անոնց ընտանեաց ողբերն ու աղաղակներն ամենեւին բանի մը տեղ չգնեն, ոչ կը խղճէ և ոչ կերկնչի: Ինքը փոխանակ հեղութիւն, խոնարհութիւն և անյիշաչարութիւն ցոյց տալու, ընդհակառակը չարաչար կիրք և հակակրութիւն կը դործածէ, ժողովուրդն ալ հիմայ բոլորովին զայրացած և յառաւել ատելութիւն դրդուած է իրեն դէմ:

Ժամանակն յառաջ մինչդեռ Պետրոս վարդապետը իրեն հրացան պարպող օտարազգի թշնամւոյն յանցանացը վեհանձն և քրիստոնէական վայելչութեամբ ներու մն և անոր շղթայակապ բազմամեաց բանտարկութենէ ազատութիւն շնորհել կը փութայ և կուտայ, հիմայ ասոր ծայրայեղը կը աեսնենք որ արհի երեւմիա եպիսկոպոսը իրեն անպարտ ազգայնոցը վրէժխնդրաբար ոչ ներումն և ոչ ազատութիւն կը շնորհէ: Որչափ շոշափելի տարբերութիւն քրիստոնէութեան երկու կղերաց, և որչափ վսեմ բարոյականութիւն քրիստոսեան խաչակիր եպիսկոպոսին . . . ինչ և իցէ: Սոյն եպիսկոպոսը խելմ'ալ ասոր անոր մինչև վալի փաշային առջեւն ալ ազգասիրական իմա դու ազգաւերական անվեհերութեան և անսաստ կամապաշտութեան խօսքեր ընելով կը սնապարծի եզեր. զորս ականջալուրք կը վկայեն, որովք և ամենուն բերնին բամբասանաց և այսպանաց նիւթ մ'եզած, այժմէն ուրիշ պատճառները մէկդի թողլով, իր այս ընթացքովն ալ ասելի և խաղալիկ մ'եզած է հասարակութեան առաջ մինչև օտարազգեաց խկ: Մենք իրեն այն ըսած խօսքերն ալ մի առ մի գրել անվայել վարկանք. արհիապանձ եպիսկոպոս մը, առաջնորդ մը, հիմն այսպէս սկզբնաւորէ նէ, ընկուածն ինչպէս պիտի վերջացունէ չենք

դիտեր : Չարմանալի՛ բան , այս եպիսկոպոսը հոս չեկած , մինչ  
 դեռ ժողովուրդը շատնոց ի վեր ուրիշ առաջնորդ մը երբէք  
 չընդունելու պատրաստութիւններ կընէր , և հիմայ ալ ասոր  
 գալէն ի վեր երբէք չուզուելուն համար այսչափ դժտութիւն  
 ներ կը ծագին , ընդհակառակը 381 թիւ փունջին մէջ խորա-  
 մանկարար սուտ կը լրագրուի թէ « բոլոր ժողովրդեան մէջ միա-  
 բանութեամբ պատրաստութիւններ կըլլան ղերեմիա եպիսկոպո-  
 սը արժանաւոր շքով ընդունելու համար » որուն սուտ և ընդ-  
 հակառակը եղած ըլլալը արդէն յոյսնի երեւցան ներկայէս :  
 Փունջը Սմերիկայի սեւերուն լրագրական ընթերցասիրութիւ-  
 նը ի յանդիմանութիւն ճերմակ Հայոց կը լրագրէ , արդ մենք  
 ալ իրաւունք կը դատենք զաւ ի սիրտ ըսել թէ քանի որ այս-  
 պէս զգալի եղած սուտ և խարդախեալ լուրերը ի վնաս աղ-  
 գութեան դիտարար կամ տգիտարար գրեթէ միշտ կը հրա-  
 տարակուին նէ , ժողովուրդն ի՞նչ պարտաւորութեամբ սէր և  
 հաւատ ընծայէ այնպիսի լրագրի և զանի կարգայ առ ի դայ-  
 թակղութիւն և ի խռովութիւն . ինչեկոցէ : Չարմանալի կէտ  
 մ'ալ այս է որ կարծես թէ վարչութիւնը գոնէ փոխանակ ու-  
 րիշ խոհեմազարդ և աղգանուէր կղեր մը խրկելու զայս եպիս-  
 կոպոսը խրկելովը Սեբաստացոց սրտերուն՝ այս անձին ապա-  
 գով ընթացքէն այժմէն բոլորովին խրտչելով , և իրենց վաղե-  
 մի երաստաւոր և բարեբարոյ կղերաց յարգը լաւ ևս ճանչե-  
 լով միոյն տեղ տաննապատիկ ևս զանոնք ուղելու սիրելու և  
 որով իրենց այս ընդհանուր արդար բաղձանացը և ընտրու-  
 թեանը հակառակող հրամանաց ևս « ան զե » հակառակելու և  
 բնաւ չընդունելու մեծագոյն գրգիւռը կամ բորբոքը և հա-  
 կակրութիւնը գրեթէ յանդէտս նօթձած է . ըստ ներկայ ար-  
 դեանց այս սյուպէս կերելի :

Մեր մինչեւ ցարդ պատմածները իրական և ճշմարիտ ե-  
 ղերութիւններ և ոչ կեղծիք ըլլալուն , իրաւունքնիս է ըսել  
 թէ թող ոչ վարչութիւնը և ոչ այլ ոք զմեզ իբրև Սեբաստա-  
 ցոց կուսակից կամ անոնց վաղեմի կղերացը թեկն ածելով  
 խօսող կարծէ կամ զրդուուի մեր դէմ , այլ եթէ մեր զրիչը  
 կասկածելի կը դատուի , թող եղերութիւններն արդարու-


թեամբ քննուին , դատուին , այն ժամանակ մեր այս գրուտ-  
 ծոց մէջ անկողմնակալ ճշմարտախօսութեամբ պատմուած ըս-  
 տուգութիւնը քաջայայտ պիտոր ըլլայ :

Մեծապատիւ Տէր , ասկէց յառաջ քանի քանիցս ուրիշ  
 ճշմարտապատմւոյցուածներ ալ լրագրաց մէջ հրատարակ-  
 ուելու խրկուած և մինչև ցայսօր կուսակցութեան ողւով յա-  
 նիրաւի տպուելու արգիլուած , իսկ ընդհակառակը քանի մը  
 խռովոյոյղ անձա՛յ սուտ և անխղճութեամբ գրուած յօդուած-  
 ները չարաչար մեքենայադործութեամբք ի վնաս աղղին և ան-  
 մեղ անձանց անմիջապէս և միշտ ցայսօր իսկ տպուելու ար-  
 ժանացած են , զայս յիշելով կը յուսանք թէ սոյն յօդուածն  
 ալ յիշեալ չտպուածներուն դժխեմ բաղղին չարժանանար ձեր  
 արդարադատ և աղգասէր ողւոյն շնորհիւ :

Ի վերջոյ զայս ևս ստոյգ ծանուցանելով որ եթէ Սեբաս-  
 տացոց ընդհանրութեան և շրջակայ դիւզականաց առաւե-  
 լութեան ձայնը անխելի ըլլայ , և իրենց վիճակը սոյն ցաւա-  
 լի տարտամութեան մէջ մնայ տակաւին , իրենք խիտտ սար-  
 սափելի հետեւանաց ենթարկուելուն ներկայ սպառնալիքը  
 դժբաղդաբար անյապաղ ի կատար և յարղիւնս պիտոր ածեն .  
 կը կնքեմք խօսքերնիս , և ձեր մեծապատուութեան ալ մեր  
 խորին յարգանաց և համակրութեան հաւաստիքը նուիրելով ,  
 կը խնդրենք ի ձէնջ որ սոյնը ողջամբ հրատարակելու շնորհն  
 ընէք առ ի զգոյշ ուշադրութիւն և յաղգախնայ հոգարկու-  
 թիւն կեդր . վարչութեան :

Մնամք բարեացակամ աղղիս և ձերումդ մեծապատուու-  
 թեան

Վարդ Մամիսեան



1869 Օգոստոս 12 'ի Սեբաստիա .

Մեծ ազատիւ Սղղ ասէր ճշմարտասէր Տէր Խմբագիր . . .

Քանի մը լրագրաց մանուանդ փունջի մէջ Սեբաստիայ նըկատմամբ հրատարակուած յօդուածոց և լրոց անտեղութիւնը խնդրոյն խստ թեմէն կշռելով անկողմնակալապէս վերահասու եղած, բայց և զմեզ այս քաղաքիս մէջ իբրեւ օտար հիւր համարելովն ցարդ երկայնամտաբար լուծէինք. վերջապէս ճըշմարտասիրութիւնս լուծեանս յաղթահարեց. և գրիչ ի ձեռին առեալ այս անգամեայ փունջի Սեբաստիայ նկատմամբ գրածներուն վրայօք հետագայն ձեր անկողմնակալ պատուական լրագրոյն միջոցաւ հրատարակել ստիպեցայ իւր սրոց անկէ:

Փունջ լրագիրը, որուն ցարդ Ս. Պետրոս վարդապետի և այլոց դէմ թէ իր համախոհից և թէ իր կողմանէ հրատարակածներուն ստութիւնը ու չարաչար ոգին արդէն ամեն արդարագատ մտաց քաջայայտ եղած են իւր 372<sup>ր</sup> թուոյն մէջ կարագետ ետխկոպոսի ցարդ անխախտ ուղուերուն վրայ 'ի ԶՈՒՐ զդ աջած ցաւը յայտնելէն յետոյ նոյն դառնութեան սրամտութեան մասնը Պետրոս վարդապետի վրայ թափեր է զանի անհնազանդ, Պատրիարքարանի հրամանին իբր դիմագիր անարդու վատահամբաւելով, և Բ. Դրան ձեռքով բռնի անարգաբար 'ի Պօլիս բերուելու սպառնալով: Փունջ ստաստեղծ լրագիրը կերելի թէ սաստիկ հակառակասէր և ոխակալ ոգի մը կը կրէ Սեբաստիայ դէմ. վասն զի չէ թէ Պետրոս վարդապետը չուղեր հնազանդ իլ դալ 'ի Պօլիս, այլ չկրնար, քանի որ Սեբաստացիք զինքը չեն թողուր. ուրեմն փունջը բացէ ի բաց բոլոր Սեբաստացւոց դէմ կը զինի և կը կրաւորի և ոչ թէ Պետրոս վարդապետի, ուղղակի զանի վատահամբաւելովը իզուր. որովհետեւ ինքն ալ բարոյական մարդկութեան ատենէն դատապարտեալ կը մերժուի: Մեք զինքը կարեկցաբար կը յորդորենք զիւր ազգասիրական կարծած ոգին լաւ զննել դիտել որ դուրէ մոլեռանդական ըլլալով ազգաւերութեան զակատած լինի: Քանզի կը տեսնենք որ օր ըստ օրէ աստ քաղաքացիք տակն ի վրայ երկպառակ կամ ճիշդ եւս բիւրապառակ կըլլան, ինքը

տակաւին այդքէն յանկեանուրեք քաջուած իր և այլոց կերքերը կը գգուէ, և դիւրին դիւրին կը ջարդբորէ և կը դրէ թէ Պետրոս վարդապետը անպատճառ և անշուշտ 'ի Պօլիս պիտոր դայ եւայն. այ՛, Պ. փունջ, այս տեղացիք ինչ կըլլան թող ըլլան հոգ չէ բնաւ, միայն թէ քու և համախոհիցդ կիրքն ու բաղձանքը անշուշտ կատարուին, այս կուղես այնպէս չէ: Բայց ոչ երբէք: Այս խօսքերն վասն այն փունջին ուղղել ճըշգրիտ և արժան դատեցանք, որովհետեւ միշտ ցարդ տեսանք որ նոյն իսկ Պօլոց վարչութեան հրամանէն վեր և խիստ շատ վեր կը յոխորտայ կը տուփայ կը խանտայ և հապշտապ կաճապարէ որ Պետրոս վարդապետը անշուշտ Պօլիս բերուի: Բայց անոր փորուն ցաւն յայտնի է, որ ոչ ուրիշ բանի մը բայց եթէ ք. Ղազարոսեանի պէս սխալական և վնասակար անձին հետ խիստ չափազանց մտերիմու համախոհ ըլլալով անոր մինչև ցարդ թափած ճգանց և կրիցը անկատար և գրեթէ հողմահոս ըլլալու համար այնչափ կը մոլեգնի. ապա թէ ոչ իրեն ինչ պէտք որ վարչութեան հրամանին իբրեւ իւր և կամ իւր կիրքն իբրեւ վարչութեան կամք գործածէ, գրէ կամ իբրեւ պաշտօնական լրագիր պոռայ կանչէ: Ինչպէս ամենուն նոյպէս իրեն ալ խօմիլ գրելն իրաւունքով միայն ազատ է և իրաւունքն ալ բանին արդարաբուղիս օրինաց կարկնովը չափուած և սահմանուած. ուրեմն պարտական է փունջը գրիչը գործածած ատեն այս չափէն և սահմանէն անդին չանցնիլ, որպէս զի այլոց ալ նոյնը իրեն դէմ ընելու տեղի չտայ: Եթէ վարչութիւնը բանաւոր պատճառ և իրաւունք որով և ազգեցութիւն ունի նէ կրնայ զանոնք յայտնել ծանուցանելով զՊետրոս վարդապետը 'ի Պօլիս գալու պարտաւորել, ան ատեն տեղույս ազգայինքն թերեւս խօսք կը հասկանան և չեն ընդդիմանար վարչութեանը: Վարչութիւնը երբէք կարօտութիւն չունի փունջի անիրաւ յոխորտանայ և հրամանահանութեանցը՝ Պետրոս վարդապետ մը 'ի Պօլիս բերել տալու համար: Փունջը սրչափ որ կարելի է նէ թող նայի որ ազգային լուրերը ստոյգ աղբիւրներէ միշտ առնու և հրատարակէ և իր էջերը սիրոյ և ճշմարտութեան յօդերով լրացունէ. զայս որ ընէ մեծ ազգասիրութիւն մը ըրած

կըլլայ իր պաշտօնին նկատմամբ: Մեր առջի խօսքին շարունակութեանը դանք: Ըսինք թէ Սեբաստացիք չեն թողուր զՊետրոս վարդապետը Պատրիարքարանի հրամանին հակառակ. արդեօք ինչո՞ւ և ի՞նչ իրաւամբ: Անշուշտ պատճառ մը կայ, որով և իրաւունք ալ ունին զայդ ընելու, և այն ալ կարծեմք թէ նոյն իսկ Պատրիարքարանը առթած է. ըստ որում Սեբաստացիք հաւատարիմ աղբիւրներէ Պատրիարքարանի յիշեալ հրամանին միայն հակառակաշարժ ոմանց մեքենայագործութեամբք և ոչ թէ վարչութեան լիակատար և արդարորոշ կամօքք եղած ըլլալը զգացած, և դարձեալ քանի քանիցս հանրագրութիւններ 'ի Պատրիարքարան ուղղուած ժամանակ իրենց ընդհանրականութեան կամ առաւելութեան ձայնը լրսուելու տեղ պատառ մի թղթի պատասխանագիր մ'ալ գտնէ չխրկուելուն վրայ անմեղադրելի ցասմամբ բողբոջին զայրացած ըլլալնէն զատ, կը տեսնեն որ տակաւին Պատրիարքարանը ցայսօր մեղադրելի հակառակ շարժմամբ մը քանի մի անարժան անձանց նուաղեալ սղօր ճիչին միշտ լսելու խոնարհելու, և ցայսօր անոնց անիրաւ խնդիրները ծածուկ մեքենայագործութեամբք ոմանց կատարելով ալ իրենց մեծապէս ցաւ և տըրտունջ պատճառելու յօժարափոյթ եղած է: Ահա այս է և աստ Սեբաստացւոց՝ և ոչ թէ Պետրոս վարդապետի՝ ըստ կարծեաց փունջի, Պատրիարքարանի հրամանին անհնազանդ և հակառակորդ գտուելուն պատճառն և իրաւունքն, զոր արդարագատ մտքեր կրնան քաջ նկատել և վկայել: Ուստի ոչ Պետրոս վարդապետ ուղուած ժամանակ զանի կը թողուն կոր և ոչ ալ չեմ մոռնար յիշել նաեւ թէ հռոմէացի ուղուած ժամանակ ալ, հռոմէացի կուտան կոր: Պատրիարքարանի Սեբաստիոյ դէմ բռնած այս ընթացքը արդարեւ մեծապէս զայրանալի և ցաւալի է. այսպիսի ընթացք մը բողբոջին հակասահմանադրական է անոր որ կը պարծի և կաշխատի սահմանադրական երեւնալ և ըլլալ միշտ. յայտնի և թէ գաղտնի բռնութիւն ու բռնաբարութիւն կը նկատուին կոր Սեբաստիոյ համար բռնուած յիշեալ ապօրինաւոր ընթացից մէջ: Թող ներուի մեզ աստ անաչառապէս ըսել թէ Արիստակէս սրբազանն ալ Սեբաստիոյ նը-

կատմամբ նոյն ապագով ընթացքն ունէր յանդէտս և յակամայս, մանաւանդ Ք. Ղաղարոսեանի պէս ռիսակալ և վնասակար անձի մը ծածուկ և անդուլ մեքենայագործութեանցը ուղղակի կամ անուղղակի կերպիւ մատնուելովը ինչ և իցէ . . . : Ըստ Մամլոյ 28<sup>ր</sup> թուոյն դիցուք թէ՛ Պետրոս վարդապետի 'ի Պօլիս կոչուելը վարչութեան կամ խառն ժողովոյ ամբողջակամ որոշմամբք եղած ըլլայ, և ոչ՝ ինչպէս ըսած ունինք ոմանց հընարիւքը: Արդ ի՞նչ ըսենք ասոր, ի՞նչ ընել պէտք է, խառն ժողովոյ կամքը հրամանը ըլլալու համար որուն պատճառն անծանօթ կը սեպուի տակաւին, այս տեղ ամբողջ քաղաք մը թող կորչի՞ ըսենք. և միթէ նոյն ժողովն իսկ կրնայ ըսել կամ ուղել այսպէս բան մը. քան ոչ երբէք: Ուրեմն շատ մը իրաւանց փաստերնիս մէկ կողմ առ այժմ թողով, անհրաժեշտ և վերջնական կը համարինք ըսել թէ լաւագոյն է և կըլլայ ամբողջ քաղաքի մը անկորուստ պահպանութեանը զեղծիչ ժողովական վճռի կամ հրամանի մը զիջում կամ բարձում ընել քան թէ անօգուտ կամապաշտութեամբ կորուսանել քաղաքը: Այս ըսածնիս ալ թող չկարծուի թէ կեղծ սպառնանք մ'է այլ գրեթէ մօտալուտ իրողութեան մը ճշմարտութիւնը. զոր կապառնայ հասարակութեան արդար ցասումը:

Այնպիսի ձախորդ վճռի կամ հրամանի մը դարձը կամ բարձն ալ կարծեմք թէ առջի ձախորդ սուկալի հետեւանայ հետ բաղդատելով, ոչ թէ անպատուութիւն մը կը բերէ ժողովին այլ մեծ պատիւ. ուստի այսպիսի պարագաներուն մէջ ժողով մը իր հրամանը կրնայ յետս կոչել խոհեմաբար: Բայց մեր Պօլսոյ խառն ժողովը Պետրոս վարդապետի համար Սեբաստացւոց ընդհանուր կամացը հակառակ ըրած հրամանը չուզեր յետս կոչել եղեր, ինք զիտէ. մեր այս անկողմնակալ կարծիքները կեղծիք մը կը համարուին եղեր, հոգ չէ, միայն մենք կարեկցաբար կը բարեմաղթենք որ ազգային ամեն կերպ ընթացից վախճանը ի բարին կատարի յանդի: Պետրոս վարդապետի 'ի Պօլիս կոչուելը ի՞նչ նպատակաւ և պատճառաւ կըլլայ ըլլայ, պէտք էր յայտնի ըլլալ. բայց քանի որ ծածուկ է պատճառը, այդպիսի կոչում մը բարի նշանակութիւն մը չու-

նի մանաւանդ թէ ոճիրի . և եթէ դ ստապարտութեան արժանի է պէտք է որ յանցանքները առանց այսպէս ծածկելու յայտնուին և ապա կոչուի , որուն ժողովուրդն ալ ըսելիք մը չունենար . ապա թէ այսպէս բան մը չկայ ինչո՞ւ կը կանչուի և ինչո՞ւ պատճառն ալ ծածուկ կը մնայ . ժողովուրդը վերոյիշեալ պատճառներէն զատ այս պատճառներով ալ հրամանի ընդդիմանայ և Պետրոս վարդապետը չթողունէ , ի՞նչ յանցանք ունեցած կըլլայ , ի՞նչ անիրաւութիւն ըրած և ի՞նչ արմարդութիւն . . . : Դարձեալ կըսենք , Սերաստացւոց իրենց վարդապետը այսքան ուզել և չթողունին յայտնի կը ցուցնեն թէ դո՞՛հ են անկէջ , և մինչդեռ դո՞՛հ են հարկաւ անոր բարեգործական ազդասիրական արդիւնքներն ալ տեսած և վայելած են , հարկաւ անկից վնաս մը կրած ըլլալու չեն . և յիրաւի իսկ անոր ազգին ըրած բարիքները քիչ չէ , զորս մի առ մի ծանուցանելու համար յատուկ յօդուածի մը կարելորութիւն կը տրուի , վասնորոյ չուղեցինք աստէն նշանակելով յօդուածս առաւել ևս երկարել . չեմ մոռնար ըսելու թէ նոյն ինքը վարուց բարուց մասին ալ նոյնպէս ըստ կարեացն ընտիր և դու վելի հանդիսացած է : Արդ այսպիսի անձի մը դէմ ի՞նչ պէտք է ի զուր անիրաւել բանիւ կամ գործով . և ի՞նչ պէտք անկից դո՞՛հ եղող ժողովրդեան կամայը հակառակել , ասիկայ բարոյական մարդասպանութեան ոճիրը կը նշանակէ . ի՞նչ իրաւամբ մարդոց որդին այս բանս ընել կը յանդգնի . . . : Եթէ անոր ցարդ վանքին դպրոց մը չհաստատելը և վանաց ստակները ուտելը կամ ի զուր վատնելը և կամ վանական ելեւմտից հաշիւ մը չտալը կառարկուի , բացէ ի բաց կրնանք ըսել թէ սուտ և դրպարաութիւն են այդ առարկութիւնքը , ըստ որում արդէն կուզէ դպրոց հաստատել , բայց կը խորհի եղեր նախ անչարժ եկամուտ մը պատրաստել , և ահա անցեալ տարի զայդ կատարելով մինչդեռ դպրոցն ալ պիտոր բանար , զինքը ուզելուն կանչելուն ետեւէն ինկան որով ինքն ալ անհանդիստ ըլլալով չկրցաւ բանալ , հաշու մասին միշտ տուած է , և այս տարի ալ կրկին մանրամասն հաշիւ մը տուաւ քաղաքի ազայից , որոց հաշուետու մարներն ալ պահուած են ա-

նադարաւ . իսկ մինչև ցայսօր ստակ մը կերած ու կերուցած չըլլալն և կամ արդ իսկ իր կամ ուրիշի մը քով անձնականին համար ստակ մը ունեցած չըլլալը շատ յայտնի և շօշափելի ազդեցոյցներով ծանուցուած են . արդ ահա այս մասամբք ալ բնաւ մէկը ըսելիք մը չունի , եթէ ունի թող յայտնէ , ապա թէ ոչ չէ արժան աններելի անմեղ սպանութիւն գործել . ով որ ճշմարտութեան լեզու և գրիչ չունի , թող պապանձի և կարկամի : Մենք իբրև ազգային անհատ մը և ոչ Սերաստացի կամ բարերարեալ և կամ ակնկալու մը ըլլալով սոյն տողերը ազդասիրաբար յանուն ճշմարտութեան թեւակոխեցինք գրել ստութիւնները առակել և անմեղութիւնը հսկել : Սրդ քանի որ Պետրոս վարդապետի անհնազանդ կոչուելու մասին անպարտ ըլլալը և նմանապէս ուրիշ զանազան մասամբք ալ յանցանք այսինքն ազգային պատասխանատուութեամբք դատու պարտելութիւն մը չունենալը՝ բաւական յայտնի եղան , ուրեմն ոչ փունջը և ոչ իր համախոհներն ալ Պետրոս վարդապետին վատահամբաւելու և սպառնալիք կամ կիրք տեղալու իրաւունք մը ունին : Նմանապէս Սերաստացւոց ալ ըսելիք մը իրաւամբ չունին :

Կը խնդրեմք , մեծապատիւ Տէր , ի սէր ազգութեան և ճշմարտութեան յօդուածոցս ամբողջութեանը՝ ձեր պատուական լրագրոյն էջերուն մէջ անկիւն մը շնորհել անզլաց բարեհաճիք :

Մնամք բարեացակամ ազգիս և ձերումը մեծապատուութեան :

Վարդ Մամկունեան




5590

« Ազգային գրադարան



NL0030955





3720